

# ՀԱՅ ՍՎԱՌՈՒՄ

ՊԱՆՏՕՆԱԹԵՐՐ  
A. U. C. U. F  
ԳԻՄՆԵԱԼ 1918 ՈՆ



ORGANE  
DES SCOUTS ARMÉNIENS  
FONDE EN 1918

## "HAI SCOUT"

Գ. ՏԱՐԻ (ՆՈՐ ՇՐՋԱՆ)

ԹԻԻ 3

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1929

### ՍԻՐԵԼԻ ՍՎԱՌՈՒՄՆԵՐՍ

Ձեր կեանքին մէջ բնաւ երջանիկ չպիտի ըլլաք եւ ոչ ալ յաջողիք եմէ առողջ եւ գորաւոր չէք, պէտք է ունենաք այնպիսի սովորութիւններ որ ձեզի տան առողջութիւն եւ գորաւոր մարմին:

Ձեր այս տարիքին մէջ է որ ձեր սովորութիւնները եւ բնաւորութիւնը պիտի կերտէք, որ ձեր ապագան պիտի ապահովէ:

Ամէն մարդ իր սովորութիւններուն եւ բնաւորութեանը պաշտպանեալն է: Լաւ սովորութիւններու տիրանալու համար պէտք է հոգիով ու մարմնով աշխատիլ. ձեր միտքը եւ մարմինը զարգացնելու համար, այս տարիքին մէջ միայն այդ ըլլայ ձեր գրադուրը. գէշ եւ անողտու բաներու վրայ երբեք մի մտածէք, ձեր այս տարիքին մէջ շատ դիւրաւ կրնաք գէշ կողմը հակիլ եւ այդպէսով տգեղ սովորութիւններու տիրանալ ինչ որ, կը տկարացնէ միտքը ու մարմինը ու կեանքի անյաջողութեան ու դժբախտութեան պատճառ կ'ըլլայ:

Այս նպատակին հասնելու համար, ձեզի խորհուրդ կուտամ, ամէն առաւօտ բառորդ ժամ մարզանք ընել եւ ինչպէս ձեր դէմքը նոյնպէս ձեր մարմինը բաց օդին վարժեցնել, մարզանքէն վերջ պաղ ջուրով ռաւ կամ սպունքով մարմինը պէտք է լուայ ու անձեռոցով լաւ մը շփել ու կարմրցնել:

Ակումներուն լաւ հոգ տանիլ, գէշ եւ թափած ակումները շատ մը հիւանդութիւններու պատճառ կ'ըլլան:

Ամէն բանի մէջ չափաւոր ըլլալ եւ բնաւ չի չափազանցել, մինչեւ իսկ մարզանքի մէջ: Սիկառ եւ ոգելից ըմպելիէ հեռու մնալ որոնք առողջութեան մեծ թշնամիներ են:

Ուժ տալ բացօդեայ խաղերու, ինչպէս քալել, վազել, ցատկել, ֆուտպոլ, պասքէթպոլ, թէնիս, եւլն., որոնք ճարպիկութիւն եւ առողջապահութիւն կուտան: Ամէն առաւօտ մարզանք ըրէք եւ անդէմէք փորձերը զանց մի ընէք, որոնք շատ աւելի օգտակար եւ աժան են քան բժիշկները:

Մարզանքները եւ խաղերը որքան որ հաճոյալի են, սակայն իրենց բուն արժէքը ձեր մարմինը առողջ եւ ուժով պահելուն մէջն է, այդպէս է որ կրնաք պայքարիլ կեանքի դժուարութեանց դէմ եւ յաջողիլ:

Գիտել տամ որ, մարզանքով պէտք չէ տարուիլ ձեր գործերուն արգելք ըլլալու աստիճան, ամէն բան իր ժամանակին, առանց մին միւսին արգելք ըլլալու: Որովհետեւ մարզանքը միջոց է կեանքը կանոնաւորելու եւ արդիւնաբեր ընելու համար:

Ինչ որ ալ ըլլայ մի ստէք, տկար ու փոքրոգի մարդն է որ կը ստէ, ուշ կամ կանուխ կը պատժուի ստախօսք:

Գիտցէք որ առողջ մարդը կրնայ ըլլալ պատուաւոր եւ շիտակ մարդ, ուրեմն լաւ քաղաքացի: Եւ գորաւոր ազգերը անոնք են որ, շիտակ եւ առողջ քաղաքացիներ ունին:

Ազգային Սկաուտ Պիւս  
ԳԻԿՈՐ ՅԱՎՈՒՆ



## ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Անցած օգոստոսին տեղի ունեցաւ, զանազան երկիրներէ հաւաքուած, ՅԻՍՈՒՆ ՀԱԶԱՐ պատանիներու եղբայրակցութեան տօնը:

Վսեմ եւ յուսադրիչ է գործը: Երախտագիտութեան արժանի են հիմնադիրը եւ իր հետեւորդները: Անոնք նպատակ ունին հիմէն բարեփոխել մարդուն նկարագիրը, զսպել մարդ-զազանը, անոր մէջ ամրացնելով՝ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ եւ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ զգացումները:

Պիտի յաջողի՞ն:

Ապագան պիտի տայ պատասխանը, երբ այս պատանիները դառնան հասուն քաղաքացիներ եւ ազգերու ճակատագրին վարիչները:

Այս առթիւ, պարզ եւ գեղեցիկ են Հիմնադիր Պետոյի Պէտրն Բաուրի խօսքերը:

Պետը իր խօսքը կ'ուղղէ մասնաւորապէս Մեծերուն եւ ՏԱՐԷՅՆԵՐՈՒՆ, որ, զան աջակցին փոքրերուն՝ տեւականացնելու եւ արդիւնաւոր դարձնելու «այս Թանկագին գործը»:

Ան չ'արհամարհեր «մեծ»երը. գործին տեւականացումին համար արիւն-բրտինք տուած «հին»երը, որովհետեւ գիտէ որ պէտք կայ համայնական ճիգի եւ համակրանքի:

«Ճէմպորի»ի վերջաւորութեանը, Պէտրն Բաուրը, Թաղելով ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՒ ԿՈՒԻԻ ԿԱՅԻՆԸ, մէյմէկ «ՆԵՏ» բաժնած է բոլոր սկաուտներուն, եւ իբր փակման խօսք ըսած է,

«Այսօրուրնէ սկսած, սկաուտներու նըշանաբանն է խաղաղութեան ՈՍԿԻ ՆԵՏԸ, արձակէնք զայն կարելի եղածին չափ արագ եւ հեռուն, որպէսզի բոլոր աշխարհ սորվի մարդկային եղբայրութիւնը»:

Խորհրդաւոր եւ յուզիչ է այս պարզ արարողութիւնը, բարոյական զօրաւոր հիմնաքար մըն է այն՝ համամարդկային եղբայրակցութեան եւ խաղաղութեան շէնքին համար:

Արդեօ՞ք մեր տղաքն ալ ներկայ եղա՞ն «կռիւի եւ ատելութեան կացինին Թաղման» վսեմ արարողութեան, անոնց ալ տրուած է եղբայրութեան եւ համերաշխութեան այս ՈՍԿԻ ՆԵՏԵՐԷՆ՝ բաւարար քանակով: Որովհետեւ, բոլոր ազգերէն աւելի մենք պէտք ունինք Անոր. պէտք ունինք հարիւրներով եւ հազարներով, տապալելու համար մեր գոյութեան սպառնացող ատելութեան եւ կռիւի վիշապը: Այս ժողովուրդը պէտք ունի ԻՐԵՐՑԻՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՆԱԻԱՆԻ՝ ԱՅՍ ՓՈՔՐԵՐՈՒՆ ԱՄՊԵՏԱԿԱՆ ՈԳԻՒՆ:

Եւ յանուն ինչի կ'ուղէ ըլլայ, երբ մէկը, ատելութեան եւ երկպառակութեան Թոյնը կը կանեցնէ այս վճիռ հոգիներէն ներս, ամէնաւ մեծ աջակցութիւնը բերած կ'ըլլայ հայութեան եւ համամարդկային համերաշխութեան Թշնամիին:

Պիտի ըմբռնե՞նք այս ճշմարտութիւնը:  
ԿԱՅ ՍԿԱՈՒՏ

## ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԺԵՄՊՈՐԻԻ ԱՌԹԻԻ

«Գլխաւորաբար նոր սերունդէն կախում ունի աշխարհի ապագայ խաղաղութիւնը»:

Այսպէս գրած էր Անգլիոյ Թագաւորը 2 Օգոստ. 1929, համաշխարհային Ճէմպորիին զրկած իր նամակին մէջ:

Թանկագին խօսքեր են ասոնք, որ նոր պարտականութիւններ կը բեռնեն սկաուտներու ուսերուն:

Կոչ մըն է այս, նոր սերունդին ուղղուած, որպէսզի աշխատին խաղաղութեան համար: Կոչ մըն է նաեւ ՄԵՇԵՐՈՒՆ ուղղուած, որպէսզի օգնեն երիտասարդներուն այդ ուղղութեամբ աշխատելու համար:

Յիշատակարանի մէջ, Ճէմպորիի նկարագրութիւնը ոչ թէ միայն հոն գտնուողներուն համար Թանկագին յիշատակարան մը պիտի ըլլայ, այլ նաեւ հոն ներկայ չեղողներուն համար պիտի ըլլայ արժէքաւոր հատոր մը, որ ցոյց կուտայ թէ սկաուտական շարժումը ինչ կերպով եւ որ տատիճան կատարելութեան հասած է:



# JAMBOREE (ՃԷՄՊՈՐԻ)

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

### Է Ր Ր Օ - Փ Ա Ր Ք (ԱՆԳԼԻԱ)

31 ՅՈՒԼԻՍ — 12 ՕԳՈՍՏՈՍ 1929

Համասկառուտական սոյն հաւաքումը, այս տարի Օգոստոսին տեղի ունեցաւ Անգլիոյ մէջ, որուն համար ատենէ մը ի վեր պատրաստութիւն կը տեսնուէր եւ որուն յատկացուած էր Լիվերփուլի մօտ էրրօ փարք կոչուած վայրը: Աշխարհի 49 ազգերէն 53,000 սկառուներ եւ վարիչնր կը մասնակցէին այս տօնին:

Այս շարժումին ծննդեան Չլամեակն էր այս տարի, եւ այսօր, Չլ տարի վերջ, ան իր հետեւորդներուն մէջ կը համրէ երեք միլիոնի մօտ պատանիներ, բոլոր ազգերէն: Շատ արագ կերպով տարածուեցաւ ան: Աշխարհ ա-

ռաջին անգամ կը տեսնէ այսքան խոշոր թիւով եւ այլազան ազգերու պատանիներ իրարու քով հաւաքուած՝ համամարդկային եղբայրութեան երգը հնչեցնելու համար:

Խաղաղութեան համար մեծերու ապարդիւն ճիգերէն ետքը, պատանիներու աջակցութեան կ'ապաւինի մարդկութիւնը, ձեռք բերելու համար աշխարհի խաղաղութիւնը եւ ազգերու իրաւունքը:

«Ճէմպորի»ի առթիւ հրատարակուած շքեղ Յիշատակարանէն կը քաղենք հետեւեալ մի քանի հատուածները եւ նկարները: «Շ. Ս.»

Հազարներով ժողովուրդ մեծ հետաքրքրութեամբ կ'ուզողուէին զէպի էրրօ Փարք, սկառուտական բանակատեղին տեսնելու համար:

Այս հսկայ բանակավայրը, միջազգային իրական քաղաքի մը երեւոյթը առած էր հարիւրաւոր տարբեր երկիրներէ եկած սկառուներով:

Անցեալ Յուլիս 31ին սկսաւ «Ճէմպորի»ն, յաջորդաբար կը հասնէին զանազան ազգերու սկառուները: Ոմանք կուգային շքեղ կառքերով եւ մաքուր ու կոկիկ կազմածներով: Իսկ ուրիշներ ալ իրենց վրաններու կազմածներուն ծանր բեռան տակ կ'ըսէին կուգային հաս-

տասել իրենց վրանները: Ասոնք չունէին առաջիններուն պէս նոր վրաններ:

1927 թուականին իսկ «Ճէմպորի»ի կազմակերպիչ յանձնախումբը, 30,000 սկառուներու միայն բաւարար բանակատեղի մը պատրաստած էր, սակայն 53,000 սկառուներ մաս առին այս «Ճէմպորի»ին, ուրեմն 23,000 սկառուներու անմիջական տեղ պէտք էր ճարել: Սկառուտը հնարող է, մանաւանդ միջազգային յանձնախումբի կազմակերպիչ անդամները չընկրկեցան եւ ահա Յուլիս 31ին 53,000 սկառուներ արդէն հաստատուած էին էրրօ Փարքի մէջ:

Այդ շարժման 22 տարուան տուած արդիւնքը, մեզ ենթադրել կուտայ թէ ինչեր պիտի կրնայ ընել ան գալիք տարիներու միջոցին:

Սակայն որպէսզի գործը աւելի արդիւնաւոր ըլլայ եւ տարածուի աշխարհի մէջ, սոյն շարժումը պէտք ունի աւելի շատ ՄԱՐԴՈՑ եւ կԻՆԵՐՈՒ, որպէսզի իրենց բաժինը բերեն, այն թանկագին գործին, որ է պատրաստել օգտակար քաղաքացիներ իւրաքանչիւր ազգի մէջ, եւ տարածել խաղաղութիւն, բարեկամեցողութիւն և եղբայրակցութիւն բոլոր աշխարհի վրայ:

*Robert Baden Powell*



Ֆրանսայի սկաուտները, որոնք 23,000 հոգի էին, անոնց յատկացուած էր ամենազեղեցիկ բանակաւայրը:

«Ճէմպորի»ի պաշտօնական բնակէին ջուրն էր՝ որով իւրաքանչիւր բանակաւայր կանխաւ պատրաստուած խողովակներով եւ մասնաւոր բաժանումներով ջուր կ'ունենար իր մէջ:

**ՊԱՇԱՐԵՂԷՆ ԵՒ ՈՒՏԵՍՏԵՂԷՆ**


Առաջին օրերուն ուտելիքներու բաժանումը բաւական դժուարութեան մատնեց Յանձնախումբը՝ հակառակ վաթսուն մեծ բռնակառքերու կատարած կանոնաւոր սպասարկութեանց:

«Ճէմպորի»ի ամբողջ տեղդութեանը գրեթէ կ'անձրեւէր, երթեւեկը կը դժուարանար ցեխին պատճառաւ: Դժուարութեան առաջին առնելու համար որոշուեցաւ իւրաքանչիւր բա-

նակատեղիի մէջ մթերանոցներ հաստատել: Հոս տանք երեք օրուան մէջ սպասած ուտեւտեղէնի ցանկ մը: 10 թօն իւղ, 50,000 հաւկիթ, 9 թօն կարագ, 210 թօն շաքար, 10 թօն առուչեղէն, 18,000 լիտր կաթ, 25,000 առաք պահածոյ ձուկ, 15,000 մէթր երշիկ եւ 2 միլիոն 500,000 թերթ կաղամբ:

**ՆԱՄԱԿԱՍՏՈՒՆ.** — Նոյնպէս հաստատուած էր նամակատուն մը, ուր զանազան լեզուներով օրական 50,000 զամակներ կը հասնէին ու իւրաքանչիւր ազգութեան իր մասնաւոր ցրուիչին միջոցաւ կը յանձնուէին տէրերուն:

**ԴՐԱՄԱՍՏՈՒՆ.** — Չորս զբաժատուններ հաստատուած էին 43 զանազան երկիրներու զբամներու փոխանակութիւնը կատարելու համար. շատերու ծանր կուզար իրենց երկիրներու զբամի անկումին պատճառով կրած վր-



ՃԷՄՊՈՐԻԻ ԲԱՑՄԱՆ ՕՐԸ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԵՍՔԸ, ՕԳԱՆԱԻԷ ԱՌՆՈՒԱԾ





ԼՕՐՏ ՊԷՏԸՆ ԲԱՌԻԸ ԵՆ ՏԻԿԻՆ ՊԷՏԸՆ ԲԱՌԻԸ, ԱԳՋԻԿ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԸՆԴԷ ԽՄԲԱՊԵՏՈՒՇԻՆ) ԻՐԵՆՑ ԶԱՒԱԿՆԵՐՈՎ,

նասր, ասոր ասաջէր աննէլու համար որոշուեցաւ որոշ սակ մը, որով «Ճէմպորի»է վերջ գրամատուներ նշմարեցին որ 2000 անգլիական սակիի վնասի մը ենթարկուած էին ի սէր սկսուտներու:

\* \* \* Էրբո Փարքի հսկայ բանակառեղիի հաստատման պաշտօնը յանձնուած էր անգլիացի երէց սկսուտներու (Rovers), որոնք Յուլիս ամսուան ընթացքին իրենց 15 օրուան արձակուրդը գոհած էին «Ճէմպորի»ի բանակառեղիի հաստատման գործին. ելեքտրագէտներ, ճարտարագետներ, բոլորն ալ Rovers ներ, օրերով աշխատած եւ Յուլիս 31ին մեկնած էին առանց կարենալ վայելելու այս գեղեցիկ գործին արդիւնքը: Այս առթիւ Լորտ Պէտըն Բաուէլ, գեղեցիկ գնահատական մը ուղղած է յիշեալ «երէց»ներուն:

**ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ**

Մասնակցող բոլոր ազգերը ինքնուրոյն կերպով եւ սկսուտական շինարար աշխատանքով ներկայացած էին այս բանակումին:

Այսպէս ֆրանսական սկսուտները մի-

միայն սկսուտական գաւազաններով 15 մլթր բարձրութեամբ «էյֆէլի Աշտարակ» մը եւ «Վանայ Թատրոն»ը շինած էին իրենց բանակառեղիին մէջտեղ: Հունգարիոյ սկսուտները, յաղթական կամար մը բարձրացուցած, ծագիկներով զարդարուած եւ «Հունգարիա» մակագրած էին: Պուլկարիոյ սկսուտները ծառի ճիւղերով շինած գիրերով, «Պուլկարիա» անունը օգին մէջշուանով կախած էին: Հնգկատանի սկսուտները յատկանշական սխներ շինած էին իրենց երկրին արուեստը արտայայտող, նոր Զեւանտացիներ շինած էին իրենց գիւղական խրճիթները ներկայացնող շինութիւններ: Եգիպտացիները հին եգիպտական նշաններով զարդարած էին իրենց վրանները: Հետաքրքրական էին նաեւ Լեհերու շինած տախտակէ տնակները, Զուիցերիացիներու «կլոր սեղաններ»ը, եւ Ամերիկացիներու Gamp Palaceը:

Եւ այս բոլոր զանազանութիւններու կարգին կարելի էր նշմարել բոլոր «Ճէմպորի»ի մասնակցող ազգերու ազգային նկարագիրը:



մաքրութիւնը, կոկիկութիւնը, որոնք առաւելապէս կախում ունէին իրենց պետութեան հարստութենէն:


Ասկէ զատ բոլոր ազգերը իրենց մասնակցութիւնը բերած էին ըլլայ զանազան խաղերով, ներկայացումներով՝ կամ կենդանի պատկերներով ամէնօրեայ սարքուած հանդէսներուն մէջ: Օրինակի համար նորվեկիացիները ազգային տարագով պարերով, Զիլիցիները իրենց երկրի երգերով եւ պարերով, Ֆրանսացիները ժան տ'Արքի հանդէսով եւ հուպիտի խաղերով, Անգլիացիները մարզական ներկայացումներով, Ճաբոնցիները «Առիւծի պար»ով, եւ այլն, եւ այլն: Եղան նաեւ սինէմայի ներկայացումներ ու նուագ, ցուցադրութիւններ՝ շինութիւններու եւ ազգային սովորութիւններու:

են փառաւոր ինքնաչարժ մը, Զիլիցի սկաուտները՝ ուսին վրայ ոչխար մը կրող հնգիկի մը արձանը:

### ՀԱՅՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Մեր մէջ սկաուտութիւնը առաջին ասթիւ ձայն տուաւ ասկէ 19 տարի առաջ, իսկ 1918ին զայն կազմակերպեց, գործի վերածեց եւ ընդհանրացուց՝ Հ. Մ. Ը. Մ. ր. Հայ սկաուտական պատմութիւնը փայլուն զբոսաշրջաններ ունի, որ կրնայ նախանձը շարժել շատ մը օտարներու: Այս անգամ 40 հոգի ունի մէկ հատուածը կարելիութիւնը ունեցաւ մասնակցելու Անգլիոյ համասկաուտական բանակումին եւ հոն կրցաւ ցոյց տալ մեր տասնեակ տարիներու ճիգին արդիւնքը:

Մեր ազաքը հոն մաս առին միւս ազ-



ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԱՆԳԱՄՆԵՐԸ

րու, զանազան տարազներով ծպտուած ներկայացումները մեծ յաջողութիւն գտան: Յիշատակութեան արժանի էին Պելճիպացի սկաուտներու «պետութիւններով պար»ը, Հունգարացիներու ծովային խաղերը, Հոլանտացիներու հեծելանիւի փորձերը, Բոլոնիացիներու նուագախումբը, եւ գայլիկներու զանազան զուարճալի խաղերը:

«Ճէմպորի»ն ունեցաւ իր լրագիրը «Անօրեայ Նետ» անունով:

«Ճէմպորի»ին վերջանալէն առաջ, ներկայ սկաուտները Հիմնադիր Պետին նուիրած

գերու շարքին, թէ տողանցքներու եւ թէ սկաուտական խաղերու մէջ եւ գնահատուեցան կարգ մը տեղական թերթերէն:

Կը յուսանք որ, յառաջիկայ ձէմպորիին աւելի փայլուն կերպով եւ ընդհ. հայ սկաուտութիւնն է որ պիտի ներկայացնենք:

\* \* Փակման միջոցին, Պետը բոլորին եղբայրակցութիւնը յատկանշող փոքրիկ նետեր բաժնեց եւ պատուիրեց՝

«Տարածեցէք այս նետերը կարելի եղածին չափ արագ եւ հեռու, որպէսզի աշխարհ սորվի մարդկային եղբայրութիւնը»:



# Հ. Մ. Ը. Մ. ՈՒ ԻՐ ՆԵՐՔԻՆ Հ Ա Ր Ց Ե Ր Ը

Այն պահուն երբ կը մտածուի ընդհանուր և հիմնական կազմակերպութեան մը ձեռնարկել, անխուսափելիօրէն պարտաւոր ենք նկատի առնել կարգ մը պայմաններ, որոնցմէ կախում ունի այս կարեւոր գործին յաջողութիւնը:

Ոչ մէկ օգուտ կարելի է սպասել այն կազմակերպական աշխատանքէն որ սկսած է Փարիզի ինչպէս նաեւ միւս բոլոր մասնաճիւղերու մէջ, մինչեւ որ չստեղծենք այնպիսի պայմաններ որոնք ապահովեն բոլոր շրջաններու ներդաշնակ տեւական ու արդիւնաւոր գործունէութիւնը:

Մասնաճիւղեր կազմելէ ու կեդրոն մը ստեղծելէ առաջ, պայման է ճշգիւ մեր ընդհանուր ուղղութիւնը, մեր նպատակը ու համոզումները:

Թերեւս տարօրինակ, աւելորդ կամ նոյն իսկ վնասակար երեւոյս շատերուն այս և յարակից հարցերու հրապարակ գրուելը:

Նախ ճշգիւմ որ, մամուլի միջոցաւ կ'արտայայտուիմ պարզ այն պատճառաւ որ, նպատակս է աշխարհի քիչ մը ամէն կողմը ցրուած Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղերը ու անդամները հաղորդակից ընել տեսակէտներուս, երկրորդ այն որ, դիւանագիտութիւնը Հ. Մ. Ը. Մ.ի ոգիին հետ խոտոր կը համեմատի, անոր ճամբան պարզ, անկեղծ ու վճռական արտայայտութիւնն է:

Երբ կ'ըսեմ ճշգիւ մեր ընդհանուր ուղղութիւնը եւ նպատակը, պատճառը այն է որ կարգ մը շրջաններ ու մասնաճիւղեր եւ մասնաւորապէս Ֆրանսայի շրջանը ունեցան խոր խափումներ, որոնք շատ աւելի վնաս հասցուցին Հ. Մ. Ը. Մ.ի բարոյական ու նիւթական վարկին:

Հարցը ծագում կ'առնէ մեր ազգային քաղաքական կեանքի աղետաբեր յատկանիշը եւ զոգ կուսակցական խուլ հակամարտութենէն որ, յառաջ եկաւ քանի մը տարիէ ի վեր մեր

ազգային պահանջներու քաղաքականութեան մասին, տեղի ունեցող ըմբռնումի փոփոխութենէն:

Այդ հակամարտութիւնները չի խնայեցին նաեւ մեզ ու իբր թէ Հ. Մ. Ը. Մ.ի ստանձնած գործին դժուարութիւնները բաւական չըլլային ամէն օր նոր խնդիր մը, նոր խոչընդոտ մը ստեղծուեցաւ, և ահա հարկադրանքը, այդ պատր ջուրերուն մէջ նաւարկելու և զաւատեն մը ուր վարչութիւն ընտրելու համար կուսակցական հանգամանք եւ համեմատութիւն նկատի առնուեցաւ, պարագայ մը որ ցարգ չէր յիշատակուած Հ. Մ. Ը. Մ.ի տարեգրութեանց մէջ: Գործին անձանօթ տարբերէ կազմուած անօրինակ պատգամաւորական ժողով մը ֆրանսայի շրջանին մէջ նոր չփոթութիւն ու դժգոհութիւն սերմանեց, իբր միակ դրական աշխատանք, դրօշակի ու ազգային տոներու մասնակցութեան խնդիրները սակարկութեան ու դիւանագիտական տեսակէտներու ենթարկելով: Պիւտձէի ապահովութեան համար մեր բարոյական հիմերը խախտել փորձեցինք եւ վերջապէս, որքան ուզեցինք դիւանագիտութեամբ վարուիլ այնքան աւելի խորը մխրճուեցանք ճախճախուտին, որ հայ ազգային կեանք կը կոչուի:

Այս բոլորը կատարուեցաւ պահպանելու համար այս շարժումը, որուն հանդէպ անկեղծ ու խորունկ իմանդազատանք մը ունեցած են Հ. Մ. Ը. Մ.ի հարազատ վարիչները:

Չեմ ուզեր մեղադրել եւ սակայն չեմ ալ վարանիր վճռապէս յայտարարելու թէ սխալ էր հեռանալ 1918ի մեր խարխախէն: Հ. Մ. Ը. Մ.ը ունի իր ինքնուրոյն դիմագիծը, իր բարոյականը, իր մտածելակերպը, իր գործելու եղանակը, իր աւանդութիւններն ու իր ոգին: Խարխախը կար, փրկութեան խարխախը եւ ինչ որ ալ պատահէր պէտք չէր հեռանալ անկէ:

TOUT DROIT (ՇԽՓ ՇԽՏԱԿ)

Ահա Ֆրանսացի սկսուածներու նշանաբանը: Ոչ մէկ շեղում բստ իս այդ միակ կարգախօսէն, որ պարտադրուած է Հ. Մ. Ը. Մ.ի ղեկավարներուն: Ունէ շեղում մեր նպատակէն, մեր հիմնական սկզբունքներէն ու աւանդու-



թիւներէն պիտի քայքայէ այս յուսալից շար-  
ժումը. ոեւէ թեքում դէպի աջ կամ ձախ վեր-  
ջակէտ մը կը դնէ Հ. Մ. Ը. Մ.ի պատմութեան:

Ժամանակ է որ արժանի լրջութեամբ նը-  
կատի առնուի այս հարցը, ամրացնելու համար  
մեր անցեալը ու հանդիսաւորապէս յայտարա-  
րելու մեր կամքը, անշեղ եւ աննկուն շարու-  
նակելու գործ մը, որ գերազանցապէս ազգային  
է ու չկրնար ենթարկուիլ ազդակներու, որոնք  
ծնունդ են որուան քաղաքականութեան:

Միամիտ չեմ կարծելու որ միահամուռ հա-  
մակրանք պիտի գտնենք բոլորէն, ինչպէս էր  
մեր առաջին տարիները, բայց կը հաւատամ,  
որ մեր գործունէութիւնը եւ անշեղ ընթացքը,  
ողջմտութեան պիտի հրաւիրէ մեր թունդ հա-  
կաակորդներն անգամ:

Բոլոր անոնք որ հրապարակ կուզան վա-  
րելու այս Միութիւնը, պէտք է գիտնան որ,  
կարելի չէ գաղափարական ու նուիրուած երի-  
տասարդութեան մը համար իր սկզբունքները

ծախու հանել կամ մէկ կողմ նետել:

Եթէ մէկ կամ միւս կողմի համակրանքը  
կորսնցնելու վախն է որ խորհիլ կուտայ մեզի,  
աւելորդ մտահոգութիւն է. մեր պարտքն է մի-  
այն այս Միութիւնը պահել իր բարոյական  
բարձրութեան վրայ, որուն մէջ է միայն անոր  
գոյութեան իրաւունքը: Պիտի օժանդակին մե-  
զի բոլոր անոնք որ համոզուած են այս գոր-  
ծին կարեւորութեան: Կան այնպիսի ձեռնարկ-  
ներ որոնց կարելի չէ հատուածական նկատու-  
ներով մտենալ. եւ Հ. Մ. Ը. Մ.ը անոնցմէ է  
Ձեռք պիտի երկարեն մեզի միայն անոնք ու-  
րոնք նեղմիտ ու կարճատես կուսակցական քա-  
ղաքականութենէ վեր կը դասեն նորահար  
սերունդի ազգային դաստիարակութեան պա-  
հանջը: Մնացածներուն համար մտահոգուիլ  
չարժեք, եթէ մտադրած են չհասկնալ այս կէտը:

Մեր խոէալն էր որ, մեզի շունչ տուաւ  
մեր խոէալն է, որ մեզի պիտի ապրեցնէ:

Ֆիլիպէ ԵՆՐՍԷՍ ԱՍՏՈՒՍԾՆՏՈՒՐԵԱՆ





**ՆԱՄԱԿՆԵՐ**

**ՍԻՐԵԼԻ ԳՐԻԳՈՐ**

Կը յուսամ թէ բաւական ըմբռնեցիր սկառուտական ոգիին իմաստը, անցեալ նամակէս:

Ինչպէս խոստացած էի, այս անգամ խըմբակի ոգիի մասին է որ պիտի գրեմ:

Հիմայ որ խմբակի մը մէջ ես, պէտք է խմբակիդ համար աշխատիս: Միայն քու լաւ սկառուտ ըլլալդ չի բաւեր, պէտք է որ ուրիշներն ալ օգտուին քու այդ յատկութենէդ:

Իւրաքանչիւր սկառուտ, առանց տարիքի եւ դասակարգի խորութեան, խմբակին մէջ հաւատար են եւ ամէն տղայ, իր կարողութեանը համեմատ պէտք է աշխատի խմբակին յառաջդիմութեանը համար, եթէ իւրաքանչիւր սկառուտ իր գիտցածը իրեն պահէ կամ միայն իրեն համար աշխատի, ի՞նչ կ'ըլլայ այդ խմբակին վիճակը. բնական է ոչինչ, որովհետեւ խմբակ մը միութիւն մըն է. քանի մը սկառուտներ քով քովի եկած, գլուխ ունենալով առաջնորդը, ձեռք ձեռքի տուած են, եւ իրարու համար կ'աշխատին:

Ահա պատիկ դէպք մը իմ անցեալի առաջնորդական կեանքէս:

Երբ էշ խմբակի առաջնորդ էի, ունէի ինքնահաւան եւ ետասէր սկառուտ մը, իրաւ է թէ շատ խելացի, ուշիմ եւ յառաջադէմ սկառուտ մըն էր, բայց միշտ հեռու կը կենար խըմբակին ընդհանուր գործունէութիւնէն, եւ միշտ առանձին կ'աշխատէր: Տղաքը ինձ դիտել տուին այդ պարագան, եւ ըսին թէ լաւ է որ ան խմբակէն հեռանայ քանի որ, օգտակարութիւն մը չունի: Իրենց ըսի թէ ինչ որ ալ ըլլայ անոր ընթացքը իրենք պէտք չէ որ այդպէս մտածեն, խնդիր չէ, թող ան մաս չ'առնէ խմբակին աշխատութիւններէն, դուք մի գանգատիք թէ անոր գործն ալ դուք կ'ընէք, շարունակեցէք այդ ընթացքը որ մը ան ալ կը հասկնայ եւ կուզայ ձեզի հետ աշխատելու:

Իսկ ես աւելի հետաքրքրուի սկսայ իրմով, եւ առիթներ կ'ստեղծէի, իրեն զգացնելու իր ընթացքը:

Օր մը գեղեցիկ առիթ մը ներկայացաւ: Հրահանգ տուած էի որ խմբակը 2-3 ձեռական աշխատութիւններ բերէ: Որոշուած օրը տեսայ որ այդ սկառուտը առանձին բան

մը շինելով բերած էր. իսկ միւսները, միասին աշխատելով՝ լաւ կարծիր խաչի տուփ մը շինած էին: Ուղղակի իրեն հարցուցի թէ որուն աւելի նախընտրութիւն կուտայ, իրենք թէ միւսներունը: Գէշ սկառուտ մը չէր որով նախապատուութիւնը տուաւ տուփին. բայց տեսայ թէ երեսը կախեց. կանչեցի քովս եւ հարցուցի իր վշտանալուն պատճառը: Ըսաւ «հարկաւ անոնցը լաւ կ'ըլլայ, քանի որ ամէնքը մէկ աշխատեցան իսկ ես մինակս ըրի, եթէ անոնք ալ ամէն մէկը զատ զատ նիւթեր շինէին, իմինչս լաւ չ'պիտի ըլլար»:


Տեսայ որ մատը վէրքին վրայ դրաւ եւ սկսայ երկար բարակ բացատրել մինակ աշխատելու անպատեհութիւնները՝ տեսայ թէ սկսաւ համոզուիլ, եւ ըսաւ. «եթէ ես ալ հիմայ անոնց հետ աշխատիլ ուզեմ, անոնք չ'պիտի ուզեն»: Հասկցուցի թէ կը սխալի, եւ յանձըն առի այդ խնդիրը կարգադրել յաջորդ խմբակային հաւաքումին:

Յաջորդին՝ տղաք ըսի, ձեզի նոր սկառուտ մը պիտի գայ խմբակին համար աշխատելու, կ'ուզէ՞ք: Բոլորը մէկ այն ըսին, եւ ուզեցին հասկնալ ով ըլլալը: Նշան ըրի այդ «նոր» սկառուտին: Ելաւ եւ ըսաւ, ես եմ այդ նոր սկառուտը, նոր եմ անոր համար որ մինչեւ այսօր խմբակին սկառուտը ըլլալով հանդերձ միշտ հեռու մնացած էի ձեզմէ, բայց առաջնորդը ինձ կըցաւ հասկնելու ու համոզելու միասին աշխատելու գեղեցկութիւնը, եւ ահա կուզամ այսօր ձեռք երկարել ձեզի եւ կը խնդրեմ որ ընդունիք իմ ալ աշխատութեանս բաժինը խմբակին մէջ՝ եւ մոռնաք անցեալի իմ ընթացքս:

Բոլորն ալ զարմացած իրարու երես նանայեցան, շփոթած էին: Անմիջապէս բացատրեցի խնդիրը, բոլորն ալ այնքան ուրախացած շնորհակալութիւն յայտնեցին ինձի. բայց ես ըսի, թէ ինձ չէ որ շնորհակալ պիտի ըլլաք այլ դուք ձեզի, որովհետեւ ձեր միասին աշխատելուն արդիւնքն է որ կըցաւ այդ առանձին աշխատիլ ուզող սկառուտը ուղղել: Իրապէս անկէ վերջ, այնքան փարեցաւ խմբակին որ տիպար սկառուտ մը եղաւ եւ անոր հոգին դարձաւ:

Յաջորդով խմբակի ոգիին մասին կրկին կը գրեմ:





ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒՆ

Խմբապետ մը, իր խումբը կանոնաւոր կերպով մարզելու և իր սկաուտներուն հետաքրքրութիւնը արթնցնելու եղանակը պէտք է գիտնայ որ, անոնք ալ ետանդով հետեւին դասերուն:

Խմբապետ մը պէտք է ամէն կերպով ազոց օրինակ ըլլայ, դասատուի մը նման:

Ասոր համար խմբապետները պարտին գիտնալ հետեւեալները:

Ա. Զանալ ամէն մէկ փորձերուն տիրած ըլլալ. կարելի եղածին չափ շատ փորձել:

Բ. Իւրաքանչիւր դասի համար կատարեալ կերպով պատրաստել:

Գ. Բոլոր կատարուած փորձերուն համար տետրակ մը ունենալ, և փորձերու ծանօթութիւնները կանոնաւոր կերպով արձանագրել անոր մէջ:

Դ. Իւրաքանչիւր փորձ կրկնել, յետոյ փոխել աստիճանաբար, զիւրինէն զժուարը և պարզէն բարդը երթալով:

Ե. Արդիւնք ձեռք բերելու համար սորվեցնելու ձեւը հետաքրքիր դարձնել:

Զ. Փորձերը այնպէս կարգի դնել որ տղաքը օգտուին և լաւ տպաւորութեան տակ մեկնին, քիչ օգուտ ունեցող փորձերու ժամանակ մի վատնէք:

Է. Տղաքը այն աստիճանին հասցուցէք որ անոնք կարողանան ամէն մէկ փորձ ճշտութեամբ ու գիտակցօրէն կատարել:

Ը. Եթէ կուզէք որ դաս մը արդիւնաւոր ըլլայ և բմբռնուի, զայն բերանացի բացատրելով մէկակեղ գործնապէս ցոյց տուէք:

Թ. Փորձերը աստիճանաբար զժուարացուցէք, մէկէն բոլորովին նոր և զժուար փորձ ընել մի տաք:

Ժ. Դասերու միջոցին աղաքը այնպէս մը կեցուցէք որ ամէնքն ալ կարողանան որոշապէս տեսնել: Դասերու միջոցին պատրաստ եղէք պէտք եղած պարագային օգնութեան հասնելու տղոցը:

ԺԱ. Գործի սկսելէ առաջ նայեցէք որ ամէն ինչ լաւ վիճակի մէջ պատրաստ ըլլայ ԳՐ. ՅԱԿՈՒԲԵԱՆ

ԽՄԲԱԿԻՆ ՅՈՒՇՍԳԻՒՐԹԸ

Հայ Սկաուտի Ա. թիւին մէջ, այս մասին խօսելի վերջ, խոստացեր էի, բացատրել թէ ի՞նչպէս պէտք է ըլլայ Յուշագիրքը:

Փորձառութեամբ տեսած եմ թէ Յուշագիրքը պէտք է ըլլայ 14×11 սանթիմետր մակերեսով և 100-200էջերով, որ կարելի եղածին չափ երկար ժամանակ խմբակին յուշերը արձանագրելու ծառայէ:

Ա. էջը, պէտք է ճաշակաւոր կերպով, Հ. Մ. Ը. Մ. և ՍԿԱՌԻՏՆԵՐ վերաարութիւնը կրէ, Հ. Մ. Ը. Մ. ի երկու նշանակներով, անոնց տակը, մասնաճիւղի, խումբի և խմբակի քօթեմով զարգարել, ու սկսած օրերնուց թուականը գնել:

Եթէ դուք, անձամբ չէք կրնար պէտք եղածին պէս սիրուն կերպով զարգացրել, յանձնեցէք այդ գործը ձեր խմբակին մէկ սկաուտին որ կրնայ պատրաստել զայն:

Երկրորդ էջին վրայ, գնել Սկաուտիկ Խոսումը և Դաւանամբ: Ատկէ վերջ սկսել Ազգային Պատմութենէն մի քանի կարևոր գրութեան: Մաքուր կերպով գծել Հայաստանի քարտէզը և նախկին ու այսօրուան Ազգ. Դրօշներու նմոյշները գունաւոր և համառօտ բացատրութեամբ:

Պատկանած շրջանից և մասնաճիւղից մասին ծանօթութիւններ:

Սկաուտութեան ծագումը և հիմնադրին մասին տեղեկութիւններ:

Սկաուտութեան նպատակը:



Ասոնք ամէնքը համառօտ և պարզ ոճով մը: (Համառօտ քսելով հեռագրական նախագասութիւններ պէտք է հասկնար) Ասոնցմէ զատ պէտք է էջ մը յատկացնել ձեր բնական գիւղին, քաղաքին կամ արուարձանին, կարեւոր հասցէներին, այսինքն բժիշկ, զեղարան, հիւանդանոց, նամակատուն, քաղաքապետարան, թէլէֆօն, օստիկանատուն, հրէջ, եկեղեցի, թատրոն, սինէմա, թանգարան: Պմբապետին, խմբակին աղոցը ցանկը իր զանազան մանրամասնութիւններով, և հասցէներով, ինչպէս և անոնց զբաղումը, արձանագրութեան թուականը, կարգաթիւ, կարգերը, անցուցած քրննութիւնները թուականներով, ներկայութեան և բացակայութեան ցանկը, հասակի, գրխու, վզի, կուրծքի, մէջքի, թեւի զնդերին, նախաբազուկին, սրունքին, թիզին, և ոտքին չափերը և կշիռը, ամէն ամիս անգամ մը վերաքննելու պայմանով:

Շարաթականներու և տուգանքի, ու սրնտուկի էջ մը՝ խմբակին գրամագլուխին համար:

Դրամագլուխը կարելի է աւելցնել ձեռական աշխատանքներու վաճառումով:

Գնահատութեանց և գիտողութեանց էջեր, ամէն ամսու վերջ:

Էջեր յատկացնել սկսուտական թեկնածուի, նոր-ընծայի, Բ. Կարգի, Ա. Կարգի, Վրկայեալ և Արարատեան սկսուտներու պայմաններուն համար, ինչպէս Կարգերու, աստիճաններու և պաշտօններու բացատրութեան համար, միշտ պատկերներով եթէ հնարաւոր է:

Սկսուտական մասնագիտական նշանակներու (պէճ) ցանկ մը, իրենց պայմաններով:

Խումբի մը կազմը, կապերը, բարեւի զանազան ձեւերը նկարներով:

Մարզանքի հրամանները սուրիշով և ձեռքով:

Խաղեր, երգեր, մարս և սեմաճօնի հեռագրական այբուբէնը, կողմնացոյցը իր պատկերով և բացատրութեամբ, գլխաւոր համաստեղութիւնները նկարով և բացատրութիւնով: Բարձրութիւն և լայնութիւն չափելու բացատրութիւնը պատկերով:

Առանց կողմնացոյցի կողմ գտնել.  
Ինքնապաշտպանութիւն, (ճիւղ-ճիւղսի,

սխտէմ) նկարով: Կոմիսամարտ, նշանատութիւն և սուսերամարտ):

Արշաւի և բանակումի գոյքերու ցանկ մը, բանակումի օրէնքը խմբակին և խումբի գոյքերու ցանկը:

Էջեր Խմբակի և առաջնորդական ժողովներու ատենագրութեան Բանակումի և արշաւներու տեղեկագրին և բարի գործերու համար:

Ուրիշ մի քանի էջեր սկսուտական զաւազանի և անոր գործածութեան եզանակին, մասնաճիւղի, խումբի և խմբակի գրոշակներու չափին ու գոյներուն, նկարներուն յօթէմի բացատրութեան:

Կիտի պատմութեան և զանազան խաղերու Տարեկան Աստղի և գնահատութեան նշաններու, տեղեկագիր պատրաստելու ձեւը, կարեւոր մասնագիտութեանց բացատրութիւն, և լն. և լն.:

Անշուշտ կան տակաւին աւելցնելիք չատ մը բաներ, սակայն, եթէ այսքան խակ ընէք, շատ կարեւոր գործ մը տեսած կ'ըլլաք, ուրեմն գործի սկսէք և վերոյիշեալ հրահանգները լրբացուցէք: Իսկ եթէ կան կէտեր որ ձեզի մութ կը մնայ, հարցուցէք ձեր խմբապետին, կամ ուղղակի գրեցէք մեզի, անմիջապէս և սիրով պիտի գոհացնենք Ձեզ: Ձի մտնամ բսելու որ, Յուշագիրքը սկսելէ առաջ, տուէք զայն ձեր խմբապետին որ կոկիկ յառաջաբանով մը բացատրէ ձեզի թէ՛ ի՞նչ է յուշագիրքը և մանաւանդ ո՞վ էք դուք և ի՞նչ է ձեր պարտականութիւնները ձեր խմբակին հանդէպ:

Մի՛ մոռնաք որ Յուշագիրքը կը պատկանի խմբակին, և երբ խմբակը կը ձգէք դուք, պէտք է զայն պաշտօնապէս յանձնէք ձեզի յաջորդող առաջնորդին, Ա. էջին միայ արձանագրելով ձեր անունը և պաշտօնաւարած շրջանին թուականները:

Ալֆօնսի խմբապետ (Ժ. Ա.)  
ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՂՋԵՐՈՒ







ՄԵՐ ՓԱՌՔԵՐԷՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՆՈՐԸ

«Ո՛ր սայր ինձ գ'ծուխ ծխանի  
եւ գ'առաւօտն Նաւասարդի...»

Բագրեւանդի ընդարձակ դաշտերուն կա-  
նաչ գորգերուն վրայ...

Մեզմէ երեսնեակ մը ալեւոր դարեր  
առաջ:

Հայոց աշխարհը, ուժով, անկախ ու բար-  
գաւած: Ծովէ ծով ու հովէ հով, — կասպիցն  
ու Միջերկրականը, Սեւ Ծովն ու Միջագետքը  
գրկած:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵԻԸ՝ Հայոց Քաջաց բանա-  
կին, 21,400 հոգի, — Սիւնի, Ամասկոնի, Աւա-  
ցածին, Վարձառունի, Տամբերացի, Մազազա-  
ցի, Յողկեպան, Գրբրզհունի, Վառնունի Բա-  
քան, Կճրունի, Գուկան, Պատասպարունի, Գազ-  
րիկան, Վիժանունի, Զանդազան, Սողացի, Աքա-  
ձեցի, Ասճըչնեան, Կինան, Տագրեան, — ամէն  
մէկը՝ մէկ գաւառի գինուորսխումբ, իր տա-  
րագով, իր զէն ու զարդով, իր խմբապետի ե-  
րով և իր զօրապետովը:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԹԵԻԸ՝ 21,000 հոգի, — Կազ-  
մէացի, Կարդուացի, Արծրունի, Ռչտունի, Մո-  
կացի, Գողթնեցի, Անձեւացի, Հարուկեան,  
Տրպատունի, Մեննունի, Ակէացի, Զարէհուան-  
եայ, Երանթունի, Համաստունեան, Արտաշէս-  
եան, Սազրատունի, Աբրահամեան, Տըրունի,  
Բուժունի, Քաջքերունի, Բողունի, Մուրացան,  
— իրենց խումբերով, տարագով, զէնքերովն  
ու զօրապետովը:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵԻԸ՝ 24,100 հոգի, — Ռափ-  
սեան, Սպանդունի, Վարժունեան, Առուեն-  
եան, Այծեական, Վարուժունի, Սաղկունի,  
Մանդակունի, Ընձաքին, Պալունի, Բասենացի,

Գնունի, Ապահունի, Վահունի, Ծոփացի, Խոտ-  
խոտունի, Բագրատունի, Մանաւազեան, Բզ-  
նունեան, Բղեշխն Աղձնեաց, Անդեղ Տուն, —  
խումբ-խումբ, տարագ-տարագ, իր զօրավա-  
րովը:

ՀԻՒՄԻՍՈՅԻՆ ԹԵԻԸ՝ 18,000 հոգի, —  
Վարազարտիկեան, Աշխազարեան, Զիւնական,  
Սահառունի, Հունունի, Արեղեան, Գարեղեան,  
Բոխայեցի, Գնթունի, Դիմաքսեան, Աչոցեան,  
Առուեղեան, Որդունի, Գարդմանեցի, Վանան-  
դացի, Մամիկոնեան, Տայեցի, Ծաւղէացի, Ու-  
տէացի, Կասպեցի, Կամսարական, Բղեշխ Գու-  
գարաց, — ամէն մէկն իր զէնուզարդով, պե-  
տով, զօրավարովը:

— «Եւ լինի թիւ մարտիկ արանց որ ընդ  
ազգօք՝ ութսունեւչորից հազարաց (84,500),  
թող զգունդն Ոստանիկ կամ Դրանիկ (Ար-  
քունի)»:

Թագաւորն ու թագուհին՝ հայկական ար-  
քայական ծիրանիներու մէջ, մեծաշուք փառ-  
քով, չըջապատուած արքունի սպասաւորներով:  
Նախաբարները՝ գահոյքի կարգով, արգա-  
ղիբ, զօրատու և հարկատու, երբեմն թուով  
մինչեւ 900:

Արքային ետեւէն՝ Երկրորդն Արքայի,  
Մուրացան նախարարը, Իշխանաց Իշխան:

Ապա՝ աստիճանաբար՝ Հազարապետ Հա-  
յոց, Հրամանատար, Իշխան Հայոց, Մարդ-  
պետ, Թագաւորահայր, Մաղխազ և տիազոսա-  
կիրներ:

Բազմութիւն կրօնական աւագ պաշտօն-  
եաներու, իրենց սեպուհներովը, պաշտօնեա-  
ներովը, ճորտերովը:

Ամենը՝ քանի մը բիւր:

Եւ Բազմութիւն՝ ազնուականներու և ու-  
ժիկներու, — միլիոններու թւով...:

— Հայոց սրբազան ու քաղաքական տա-  
րեգլխին, Բագրեւանդի զմբուխտ բարձրունք-  
ներուն վրայ, ամէն տարի, տաքուկ և յուսթի  
ամրան, Օգոստոսի 11-ին...:

Մեզնէ երեսնեակ մը դարեր առաջ...:

\* \* \*

Մեզի՛ ի՞նչ ցուրտ-ցմահ ձմրան Յունիարի  
մէկը: Ի՞նչ Ամանոր, ի՞նչ տարեգլուխ:



Մերը նաւասարգն է. — նաւա-Մարագա,  
այսինքն նոր-Տարի: — Տօն ու յիշատակի հան-  
դէս՝ Ամանորայ ամենաբեր դից, Վարդաւանի,  
Վարդածղի, Ասդիկ դիցուհու, նորոց պսղոց  
խնամակայ՝ արին Արամագղայ, Ասկեծին եւ Աս-  
կեմայր Տիկին Անահիտի՝ ամսնորարեր համազ-  
գային մե՛ծ տօնը...:

\* \* \*

Երնէ՛կ այն օրին՝ Հայ Արիներ, որ ձեր ու

ձե՛ր սերունդին նոր հայ քաջերու քառակն նոր  
բանակաթիւերը՝ կը շարուին՝ թեւ-թեւ՝ զե-  
րածնած Հայաստանի ծաղկուն ծխուն բար-  
ձունքներուն վրայ, ու ձեր որսի գալարափողե-  
րը կը հնչեցնեն նոր կեանքի քայլերդը,

— Արի՛ք, Հայկազունք,  
Ահա ծուխը հայ ծխաններուն,  
Եւ առաւօտը Հայ Ամանորին...:

Տ. ԶԻԹՈՒՆԻ



Մ Ա Ս Ի Մ՝ Հայուն ներեցարանը

### ԻՆՉՊԷՍ ՍԿԱՈՒՏ ԵՂԱՅ

Այդ օրն ալ ինչպէս ըսի չար բաղդէս շա-  
քարը անյայտացած է եղեր, ես առանց գիտ-  
նալու միայն Արի ըլլալու գաղափարէն տար-  
ուած «մամա ես Արի» ըսելով մօրս վրայ կը  
քալեմ ճիշդ այն վայրկեանին երբ մայրս  
կրակ ու բոց կտրած կը հարցնէր «ո՛վ առա-  
չաքարները դարակին մէջէն» իսկ ես ամե-  
նայն պաղարիւնութեամբ կը կրկնեմ «մամա  
եւ Արի» ըսել ուզելով որ, ես Սկա-  
ուտ եմ: Խեղճ կիներ այդ փոքրիկ կէտը չի  
հասկնալով և կարծելով որ շաքարները ես  
առած ըլլալով շանպատկառօրէն կը խոստովա-  
նիմ արարքս, վարձատրելու համար իմ հան-  
դրգնութիւնս փառաւոր ծեծ մը կը քաշէ ին-  
ծի: Ահա այս ծեծն է որ «Արի» բառը գորշմած  
է մտքիս մէջ և ստիպած է զիս՝ որ որոշեմ  
անպայման Արի ըլլալ:

Այդ օրէն սկսեալ Պօղոսիկի և իմ խաղա-  
ցանկին վրայ հատ մը ևս աւելցաւ, Սկաուտի

խաղը. և թէպես և լաւ չէինք յիշեր սկաուտի  
հագուստներուն մանրամասնութիւնները, սա-  
կայն գիտէինք որ անոնց ամէնէն յատկանշա-  
կան կազմածը գաւազանն էր, որով հոս հոն  
փնտոելով մեր հասակէն մեծ մէյ մէկ փայտի  
կտոր ճարեցինք:

Պօղոսիկը իր գաւազանին ծայրը թաշկի-  
նակ մը կապեց, եւ այսպէսով դրօշ մըն ալ  
ունեցանք, խմբակին գրօշը:

Այլ ևս մինչեւ երեկոյ Պօղոսիկը առջեւէն  
եւ ետեւէն, մէկ երկու ըսելով կը քալէինք,  
սպասելով որ ուրիշ օր մըն ալ տեսնէինք  
սկաուտները և ընդարձակէինք մեր ծա-  
նօթութիւնները, իրենց հագուստին և գոր-  
ծունէութեան մասին, զանոնք ընդօրինակելու  
համար: Մայրս տեսնելով որ սկաուտի խաղը  
մեզ մինչև իրիկուն կ'զբաղեցնէր և ժամանակ  
չէր ձգեր որ չարիք գործէինք, արգելք չէր  
ըլլար մեզի:

Անցաւ այսպէս մէկ երկու շաբաթ, ամառ  
էր և մենք Պօղոսիկին հետ մեկնեցանք ամա-  
ռանոց լեռնային գիւղ մը:



ԱՍԿԷ-ԱՆԿԷ

ՇՈՒՆԵՐՈՒ ՔԱՂԱՔ

Հնդիկ միլիոնատէր մը, Արծուէն Լալչէա անունով, Հնդկաստանի Բարոտա քաղաքի մօտ գնած է գիւղ մը, որ պիտի վերածէ քաղաքի շուներու համար, որոնք ժամանակի ընթացքին պէտք է այլևս մսակերութենէ դազրին:

Արծուէնի նպատակն է շուներու մսակերութեան և սպանութեան բնագոյները արմատախիլ ընել և շուները վարժեցնել բրինձի, ցորենի, կաթի և կարագի սնունդին:

Մասնաւոր խնամք կը տարուի որ շուներու քաղաքի մէջ անտէտի և մուկի բոլոր ծակերը գոցուին որպէսզի անոնք փորձութեան չ'ենթարկուին, կատուներուն նոյնպէս թոյլատրուած չէ այդ քաղաքը մտնել:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ՇՂԹԱՅԱՀՊՈՒՄ

Տղայ մը կ'ընտրուի նախ և առաջ Ք. Այս Քն որ կը հալածէ միւս տղաքները և առաջին անգամ որուն որ դպչի անոր ձեռքէն կը բռնէ. հիմա երկու տղաքները պէտք է հալածեն միւսները և երբ դպչին տղու մը, այս վերջինն ալ պէտք է ձեռքը անոնցինին միացնէ: Այսպէս խաղը կը շարունակուի, մինչև որ բոլոր տղաքները բռնուին:

Կէտ մը կ'ընտրուի կամ կը նշանակուի գետնին վրայ, որ կը կոչուի «Տան խարխախ»:

Տղաքները, որոնք Ք ին հետ են և կը կազմեն շղթան, եթէ թող տան ձեռքերնին և շղթան խզեն, կը ծեծուին, մինչև որ «տան խարխախ» վերագանան:

ՀՆԴԿԱԿԱՆ ՍՐՆՔԱՄԱՐՏ

Երկու տղաքներ կռնակի վրայ կը ստուկին՝ բազուկները արմուկներէն բռնուած և նայելով հակառակ ուղղութեամբ: Իւրաքանչիւր տղու ներսի սրունքը կը վերցուի կարելի եղածին չափ բարձր, սկսելու նշանին վրայ սրբունքները իրարու կը փաթթուին և այն տղան որ կը յաջողի գտոցնել միւսը, յազթող կը յայտարարուի:

Մեր վարձած տունը անտառի մը եզերքը դաշտերով շրջապատուած էր, և գրեթէ բոլորովին չէզոքացած գիւղին մնացեալ տուներէն: Կար նաև պզտիկ առուակ մը որ անտառէն դուրս ելլելով կը տարածուէր դաշտին մէջ:

Հազիւ թէ մեր նոր բնակարանը տեղաւորուած՝ Պօղոսիկին հետ սկսած էինք մեր անվերջանալի քայլերը, մէկ երկու, աջ ձախ, ու այդչափ միայն, քանի որ ատկէ աւելի դադափար չ'ունէինք սկսուածութեան մասին, բայց կը տոչորուէինք աւելին սորվելու փափաքովը:

Եւ այդ օրը չ'ուշացաւ: Հազիւ թէ շաբաթէ մը ի վեր հաստատուած էինք, երբ խիստ հաճելի դէպք մը եկաւ մեր փոքրիկ սրտերը ուրախացնել:

Շաբաթ օր մըն էր, երբ յանկարծ, փողի ձայն, թմբուկ, քայլերու տոփիւն և ահա 40-50 սկաուտներու խումբ մը, ուրախ զուարթ, երգելով մեր տան մօտիկ դաշտին մէջ կանգ առին:

Անմիջապէս վազեցինք, բայց չի համարձակելով մօտենալ հեռուէն սկսանք գիտել: Կարծես մըջիւններու երամ մըն էր որ երկինքէն թափած դաշտին մէջ, անմիջապէս սկսած էր իր շինարար աշխատանքը:

Ոչ մէկ տղայ պարապ, ոչ մէկ տղայ անգործ, ետո գետ, ոգեւորութիւն, աշխատանք և այս ամէնը ուրախ զուարթ երգերով ու կատակներով: Ակամայ կ'սկսինք մենք ալ խնդալ աչքերնիս ու բերաննիս խոչոր բացած ու զարմանքնէս և ուրախութիւննէս գաւազաննիս գետինը ձգած:

(Շարունակելի) 2

Խնդապեք







### Է Շ ՈՒ Կ Ջ Ա Կ Ը

#### Պ Ա Տ Մ ՈՒ Ա Ս Թ Բ

Իրեն այնպէս թուեցաւ թէ անձանօթը զինքը կը ծաղրէր: Բայց և այնպէս, հակառակ իր կամքին, պալատին մրգաստանը ուղղուեցաւ, փնտռեց խնձորենին, գտաւ զայն, թօթուեց, գետին ինկած խնձորը առաւ, տարաւ թագաւորին. և միեւնոյն ժամանակ պատմեց անոր, ինչ որ անցած դարձած էր քիչ առաջ, իր և անձանօթին միջեւ:

Թագաւորը զինքը կշտամբեց անգթօրէն:

— Չե՞ս հասկնար որ այդ անձանօթը քեզ ծաղրեր է, իր բարեւին անմիջապէս չի պատասխանելուդ համար, և լուրջօրէն կը կարծես որ, այդ կուտերը կլլելով պիտի իրականանայ մեր փափաքը: Պարզապէս խենդեցիր ես դուն:

— Եթէ մերժէք ընել, ինչ որ առաջարկեցի ձեզ վեհափա՛ռ, պատասխանեց թագուհին, պիտի խորհիմ թէ ձեր մտքին մէջ տարբեր զազափար մը ունիք և պատճառ կը փնտռէք որ զիս արտաքսէք պալատէն, և ուրիշ կրնոջ մը հետ ամուսնանաք. և սկսաւ հեկեկալ:

— Սխալ է պատասխանեց թագաւորը, ահա՛ ձեզի ապացուցանելու համար, կը հաւանիմ աս խեղկատակութեան, բայց ձեզ կ'ազդարարեմ որ համբերութիւնս սպառած է, և եթէ մի արասցէ, այս փորձէն ալ չ'օգտուիք...

Թագաւորը ապակիէ ափսէ մը և ոսկիէ զանակ մը բերել տուաւ, զգուշութեամբ խընձորը կտրեց, երկու կուտ առաւ, մէկը թագուհիին տուաւ և միւսն ալ փնք առաւ:

Յետոյ, երկուքն ալ, զրին զանոնք իրենց լեզուներուն վրայ և միտմաննակ կուլ տուին:

Ամիսներ վերջ թագուհին զաւակ մը ծնաւ.

Բայց ի՞նչ զաւակ...

Տղայ մ'էր ճիշդ է...

Բայց, էշու կզակ մը ունէր, կրնաք երեւակայել թէ որքան գեղեցիկ էր...

Նոյնիսկ թագուհին այս փոքրիկ հրէշէն վախցաւ.

Թագաւորը որ զաւակ չունենալուն համար այնքան կը բարկանար, հիմա որ հատ մը ունէր, ալ աւելի բարկացած էր. չուզեց որ անոր խօսքը ընեն, չուզեց որ պալատին մէջ մեծնայ ան: Ստնտուի մը հետ քաղաքէն հեռու տեղ մը աքսորեց զայն, արգիլեց որ դուրս ելլայ այդ տեղէն և ոչ ալ ս և է մէկը զայ զայն տեսնելու:

— Բոլորին, բոլորին, ծաղրանքին առարկայ պիտի ըլլանք, կը գոչէր, բարկութենէն սաքը գետին զարնելով:

Եւ ստնտուն, կտրուկ հրաման ստացաւ, մահուան սպառնալիքի տակ, ոչ մէկուն ըսել իշխանին տխրածութիւնը:

Գալով թագուհիին, թագաւորը բարկացոտ երեւոյթով մը ըսաւ:

— Տիկի՛ն, այս բոլորին պատասխանատուն դուք էք, թէպէտեւ կրնայի տարբեր կերպով շարժել, բայց պիտի բաւականանամ միայն զայն արքունիքէն հեռու տեղ մը զրկելով, իսկ դուք միջոցը պիտի գտնաք ձեր զաւակը իր այդ այլանդակ կերպարանքէն ազատելու, ապա թէ ոչ երկուքդ ալ պիտի աքսորեմ պալատէն:

Եւ զժբախտ թագուհին խորունկ վշտէն ընկճուած՝ իր օրերը կ'անցնէր պալատին պարտէզին մէջ պտրտելով:

Օր մը երբ քարէ նստարանի մը վրայ նստած էր պարտէզին մէջ, լսեց ձայն մը որ կըսէր.

«Ոչ գրամը եւ ոչ սրտիւր մեղ երջանկութիւն կը պարգեւեն»:

Թագուհին վեր առաւ աչքերը և նշմարեց ծեր, շատ ծեր կին մը որ կորաքամա՛հ հաստ զաւազանի էր վրայ յինձ՝ զինքը կ'զրաւէր:



# Ե Գ Ի Պ Տ Ա Յ Ա Յ Մ Ա Ր Զ Ա Յ Ա Ն Դ Է Ս

## Հ. Մ. Ը. Մ. Ի ՀԵԼԻՈՊՈԼԻՍ-ԳԱՀԻՐԷ ԺԻՒՂԵՐՈՒ ՄԻՋԵԻ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1929, ԿԻՐԱԿԻ ՕՐ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵՍՄԲ՝ ՏԵՂԻՈՅՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ՝

### ՊՐ. Գ. Տ Ի Ի Ր Կ Է Ր Ե Ա Ն Ի

Համազգային և մխիթարական շարժումը որ կայ մեր կեանքին մէջ կենդանի և ոգեւորիչ, սկաուտական և մարզական զոյգ շարժումներն են անոնք, որ կը ղեկավարէ Հ. Մ. Ը. Մ. ր:

Տեսակ մը աւանդութիւն, անյիտաձգելի գործ մը, միս և արիւն դարձաւ Հ. Մ. Ը. Մ. ր հայ կեանքի համար:

Բոլոր գաղութներու մէջ ձայն կու տայ, տարին տասներկու ամիս, հոս սկաուտութեան, հոն ֆութպօլի, միւս կողմ թէնիսի կազմակերպութիւններով: Միայն Եգիպտոսն է որ տարիներով չէզոք մնաց այս գործին հանգէպ, և հիմայ որ վերջին գաղթով հոս հասան Պոլսէն նուիրուած Հ. Մ. Ը. Մ. ականներ, վարակեցին այս բախտաւոր սակայն ինքն իր մէջ քաջուած հայութիւնը: Շարժումը սկսած է, ոչ թէ սկսած, այլ և գրական և ամուր քայլեր առած է ներկայիս:

Ասոր առաջին ապացոյցը տուաւ, անցած սեպտեմբերին կազմակերպուած առաջին Տարեկան Մարզահանդէսը, որ տեղի ունեցաւ

Հելիոպոլսոյ, Միութեանս մարզադաշտին մէջ:

Բազմութիւնը որ եկած էր հոն իրր հանգիստեալ, մարզանիշերու փայլուն արգիւնքներէն աւելի, ցեղին աւելականութեան մտահոգութիւնն ունէր, ան եկած էր իր ընկճուած հոգիին յուսադրութիւնը և վերագարթնումը տօնելու, և ծափերը որ կը տեղային մարզիկներու վրայ, ցոյցի և ձեւակաւութեան համար չէին, այլ իրական գնահատանքի արտայայտութիւնն էին անոնք:

Այսքան մը նախաբանէն ետքը տանք մրցումներու արգիւնքը:

Ճշգրտագնութիւնը կարեւոր սկզբունքներէն մին պէտք է ըլլայ Հ. Մ. Ը. Մ. ր, ուրիմն հետեւելով այդ սկզբունքին ճիշդ որոշուած ժամուն սկսաւ հանդէսը, նախագահութեամբ Հիլիոպոլսի Ազգային վարժարանի տնօրէն Պ. Գարեգին Տիւրկէրեանի, որուն մօտ ներկայ էր Գահիրէի Ազգային Գալուստեան վարժարանի Տնօրէն Պ. Լեւոն Թաշճեան, Հ. Մ. Ը. Մ. ր սկիզբէն՝ ուխտեալ աշխատակիցը:

## ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔԸ

### ՎԱԶՔԵՐ

- 100 մէթր, մեծերու. — Լեւոն Գալեմբարեան, Լեւոն Արօեան, Մուշեղ Գալվաթեան: Ժմկ. 13 1)5 երկրկ.
- 50 մէթր, փոքրերու. — Ռոն Գալեմբարեան, Լեւոն Փափագեան, Երուանդ Տիւրկէրեան:
- 400 մէթր, մեծերու. — Հայրապէ Տիւրկէրեան, Մկրտիչ Թիւրքիւնեան, Մ. Գալվաթեան: Ժմկ. 1 վ. 11 3)5 ե. վ.
- 80 մէթր, փոքրերու. — Ռ. Գալեմբարեան, Օննիկ Պողոսեան, Լ. Փափագեան: Ժ. 11 4)5 ե. վ.:
- 800 մէթր, մեծերու. — Օննիկ Չաֆեան, Զաւեն Պալունի, Ն. Տիւրկէրեան: Ժ. 2 վ. 39 3)5 ե. վ.
- 1500 մէթր, մեծերու. — Օ. Չաֆեան, Մ. Թիւրքիւնեան, Սիմոն Շահրիկեան: Ժ. 5 վ. 25 4)5 ե. վ.
- ՍԿԱՒԱՍՏՈՒԿ. — Նուայր Գուրեան, Զ. Պալունի, Արեակ Արօեան, հեռաւորութիւն, 25 մէթր 25 ս.



ԳՈՒՆԵ. — Զ. Պալուճի, Ն. Գուրեան, Լ. Գայեմեարեան, հեռաւորութիւն, 7 մէքր 68 ս.  
ԲԱՐՉՐՈՒԹԵԱՆ ՈՍՏՈՒՄ

Փոքրերու. — Ճ. Գայեմեարեան, Նուրեան Տէր Յարութիւնեան, Լ. Փափագեան, չփնե. 1 մէքր 27 ս.

Մեծերու. — Ն. Գուրեան, Տրգաւ Տրգաւեան, Մ. Թխրխնեան, չփնե. 1 մէքր 41 1/2 ս.  
ՀԵՌԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՈՍՏՈՒՄ

Մեծերու. — Ն. Գուրեան, Արգաւ Արգաւեան, Օ. Չաբեան, չփնե. 4 մէքր 80 ս.

Փոքրերու. — Ճ. Գայեմեարեան, Օ. Պողոսեան, Լ. Փափագեան, չփնե. 3. մէքր 71. ս.

ԿՐՅԱԽԱՂԵՐ

Պարկարչաւ — Փոքրերու. (սես նկար):

Անակնկալ վազք — Փոքրերու. — Անցք հորիզոնական սակաւներու մեջէն:

Սոչընդոտաւոր վազք — Փոքրերու. — Բազմաթիւ արգելքներու վրայէն:

Կալանաւոր վազք — Փոքրերու. — Զոյգեր՝ սրունքէն իրարու կապուած:

Հագուստներու փոթորիկ — Փոքրերու. — (Յաջորդ թիւով կուսանք այս խաղին բացատրութիւնը: Ծ. Խ.):

Պարանաձգութիւն. — Հելլոպոլիս-Գանիտէ Մասնանիւղերու միջեւ. Արդիւնք հաւասար:



ՀԱՆԳԷՍԻ ՍԿՉՐԵԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ

ԴԱՏԱԻՈՐՆԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ՄԱՐԶԱԴԱՇՏ. — Օրինական չափով պատրաստուած շրջագիծը անբաւարար ըլլալով, մասնաւորապէս կարճ վազքերու մէջ, մարզիկները կորսնցուցին անկիւններու դարձուածքներէն նոյնպէս ի վրաս վազքերու ստիպուած էին օգտագործել, մարզագոշտին առաջքը եկարող

փողոցին զտիվերը, զգուշանալով գրաւելէ, փողոցին լայնքը, այս պատճառով 100 մէթր վազքերը ստիպուեցանք բաժնել երկու խումբի:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՅՔԵՐ. — Սկաւառակը եւ գունդը քննուելէ վերջ գասական մարմինէն, յանձնուեցան մարզիկներու: Հրազէնը արգելուած ըլլալով ճամբայ հանելու գործողութիւնն



ալ տուփեց քիչ մը կը յուսացուի, յառաջիկային կատարեալ գործիք մը ձարել որ կարենայ հրազէնի անդ բռնել:

**ԲԱՐՉՐՈՒԹԵԱՆ ՈՍՏՈՒՄ.** — Հորիզոնական ձողերուն անկատար պայմաններու տակ ըլլալու ճակատագրականութեան դէմ կարելի չէ պայքարիլ, սակայն դէժ կարելի է միշտ լուսագոյններուն հետամուտ ըլլալ:

Փոսին մօտի աւազուտ գետիններուն օրուան ընթացքին քիչ մը շատ գործածուելով ստացած փխրուն վիճակը, որոշ չափով արգելք կ'ըլլային մարզիկներուն թափ առնելուն:

**ՀԵՌԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՈՍՏՈՒՄ.** — Մարզիկներէն կարեւոր մէկ մասին մօտ որոշ կ'երեւար ի մնաս իրենց, մեկնման զիծը կարենալ ճշգեղու կրթութեան պակասը:

**ԹԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ**


Օգտակար կ'ըլլայ սովորութիւն դարձնել, դասաւորներու ներկայութեան հաստատուած օրինական չափանիւթերու արձանագրութիւնը տե-



Փոքրերու Պարկարուտ, առաջնորդութեամբ՝ Վահե Ծահրխմանի

ղեկագիրներու վրայ՝ կանխաւ արձանագրել նզկազոսի օրջանի չափանիւթերը հաստատողներուն՝ անուան, թուականի եւ արդիւնքի մանրամասնութիւնները: Սակայն՝ նախկին չափանիւթերու վաւերականութեան պատասխանատուութիւնը ստանձնած չըլլալու համար օրուան դատական մարմինը, լաւ կ'ըլլայ որ՝ Երջ. Վարչութիւնը՝ նախ ինք պահե դասաւորներուն վա-

ւերացուցած արդիւնքներուն իսկական բնագիրը — եւ օրինակներ տրամադրելով Մասնակիղեւուն, իսկ երկրորդ մրցումի մը ասեմ ինք պատրաստե եւ դասական մարմինին յանձնե նախորդ մրցանիւթերու մանրամասն արձանագրութիւններուն ցանկը, վաւերացր-



**ՕՐՈՒԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՂԸ**

(Հ. ՃԻՋԱՄԵՃԵԱՆ, Հ. Մ. Ը. Մ. ի անխոնջ եւ անպակաս գործիչներէն մին, կրկին գործի վրայ է, այս անգամ եզրօգտական մարզագաշտէն կը հնչեցնէ փողը... Ահա մեր նախորդ Սիւնկարին բացատրութիւնը: Ծ. Խ.):

նելով զայն իր պաշտօնական ստորագրութեամբ եւ կնիքով:


**ՊԱՐՄԱՆՉԳՈՒԹԻՒՆ.** — Բուն պայքար մըն էր որ անդի կ'ունենար Հիլիոպոլսոյ եւ Գահիրէի միջեւ, իրարու յաղթելէ աւելի անակնկալ նպատակ մը կար այդ պայքարին մէջ, — յաղթական խումբին չափուիլը օրուան Դատական Մարմինին հետ...: Ոգեւորիչ մըթնոլորտի մը ստեղծած խանդավառութիւնը մրդեց օրուան դատաւորները ընդառաջ երթալ այդ անակնկալին, ստանձնելով պարանաձողութիւն մը օրուան յաղթական պարանաձիգ խումբին հետ եւ որովհետեւ ժամանակը ուշացած ըլլալով, երկու Մասնաճիւղերու մէջ երրորդ փորձ մըն ալ կարելի չէր եղած, ճշգեղու հա-



մար յազմական կողմը, հաւասար հռչակուեցան Վիճակ ձգելով, Հելիոպոլսի Մասնաճիւղին ինկաւ Դատական Մարմինն հետ մրցելու բախտը: Բոլոր ներկաներուն ծափերուն մէջ, դաշտ իջան օրուան Դատաւորները եւ նախագահը:

Աննախընթաց քայլ մը 'դաւ այս' ներկաներուն համար եւ շատ գնահատելի, նկատի ունենալով մանաւանդ որ դատաւոր մը Տօքթ. Արօյեան, օրուան նախագահը ուսուցիչ պ. Գ. Տիրակէր'ան, իրենց զաւակները, իսկ ուրիշ դատաւորներ իրենց կրտսեր եղ-

նար առանց յիշելու անցնիլ «հազուստներու փոթորիկը», «պարկարշաւը», «տակառներու մէջէն անցքը», «խոչընդոտաւոր եւ կալանաւոր վազք»երը, փոքրերու այս շատ սիրուն եւ հրահանգիչ բաժինները: Նոյնպէս պարտականութիւն կը զգամ լաւթեամբ շանցնիլ փոքրերու բաժինին մէջէն՝ բարձրութեան ստում, Ե. Տիրակէրեանի, Ս. Փափագեանի եւ Ս. Պողիկեանի երեք փոքրագոյններուն (հազիւ ձեռք մը ասրիք ունեցողներ) ստեղծած ծայրահեղ խանդավառութեանը վրայէն: Իրենք եղան օրուան քաղցրութեանց լրումն, եւ արգարօրէն բացատա-



ՄԱՐԶԻԿՆԵՐԸ՝ ԻՐԵՆՑ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ ՀԱՆԳԻՍՏԻ ԱՆԿԻՒՆԸ ՔԱՇՈՒԱԾ

բայրները ունէին իբր մրցորդ իրենց դէմ, չուանին միւս ծայրը:

Հանդիսատեսները ոգեւորութեամբ կը ծափէին այս ներշնչող եւ հրահանգիչ մրցումը...

Լուրջ պայքարէ մը վերջ, ընդհ. կըշիտի եւ մէկ քանիններուն կօշիկներուն ոչ օրինական պայմաններու առաւելութիւնը, հազիւ ի վիճակի ըրին դատական մարմինը պատիւով դուրս գալու այս մրցումէն:

Գնահատելի է Մասնաճիւղին կողմէ թափուած ջանքը՝ մարզագետին յարգարման եւ վանելջօրէն ներկայացման համար: Չեմ կըր-

բար գնահատուեցան՝ քաղցրեղէններու տուփերով:

Պարագային յարմար լրջութեամբ տեղի ունեցաւ գեղատիպ վկայականի յանձնումը նախագահին կողմէ՝ շահող մարզիկներուն, որ պատրաստուած էր տեղին վրայ իսկ, շնորհիւ արձանագրող պ. Մարգարեանին խղճամիտ աշխատութեան:

Փափաքելի է որ Հ. Մ. Ը, Մ. ի մէջ ընդհանրանայ վկայականի այս դրութիւնը, անվաւեր մետայլներու փոխարէն:

Աւարտումին, օրուան յայտարարողը Հ. Ըիզմէճեան սրտարուխ շնորհակալութիւն յայտ-



նեց Հ. Մ. Ը. Մ. ի կողմէ, բոլոր հանդիսական-ներուն, մաքի առաջնորդներուն, յարգելի նախագահին, սրտնց ի պատիւ՝ մարզիները «կեցցէ»ներով թնդացուցին զաշար Օրուան նախագահը, հիւթեղ իմաստով եւ զգաղումով լեցուն ձօն մը ուզղեց պատանեկութեան որ վերջացաւ կեցցէներով եւ ծափերով:

Հանդիսականները չուզելով բաժնուեցան այս գեղեցիկ եւ կեանքոտ միմնուրաւէն, տանելով իրենց հետ ոչ միայն լաւագոյն յի-

շատակ այլեւ ապագայի համար հաստատուն յոյս մը:

Եզիպտոսի Հ. Մ. Ը. Մ. ի այս գեղեցիկ օրը, ամբողջութեամբ շարժանկարուեցաւ, KODAK Ընկերութեան պաշտօնեաներէն եւ Միութեանս ետանդուն անդամներէն պ. Արմենակ Շահինեանի կողմէ, սա առաջին ֆիլմն է Հ. Մ. Ը. Մ. ի, որ կրնայ լաւ կերպով օգտակար ըլլալ Միութեանս փրօփականտին համար:

ՊԱՆՈՒԿ



### ԴԱՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. — Տօբ. Արուսեան, 2. — Սարգ. Պօղիկեան, 3. — Յիք. Գալեմեարեան, 4. — Վանե Շահիրման, 5. — Հայկ Ճիգլեկեան, 6. — Արարատ Բրիտեան, 7. — Արմենակ Շահիրման (նոյն օրը պատահաւ է Հ. Մ. Ը. Մ. ի եզրագ. ճշգրտի սինեմայի ա. ֆիլմը), 8. — Նուայր Կեվրեկեան, 9. — Սարահեան (օգնական) Պոլսոյ նախկին սկսուտ, Յարութ Մարգարեան (պատկերէն կը բացակայի զբաղած ըլլալով վկայագիրներու պատրաստութեամբ):

### Հ. Մ. Ը. Մ. Ի ՇԱՐՄԱԹ

Յունաստանի Շրջ. Կեդր. Վարչութիւնը Դեկտ. 24—31 ի եամենակը հոչակեց Հ. Մ. Ը. Մ. ի Շարմ: Տեղի պիտի ունենան հրատարակային հանդէսներ եւ Հ. Մ. Ը. Մ. ի նպատակը սլիտի պարզ ու ժողովուրդին:

**ՆԻԻ ԵՈՐՔ.** — Հ. Մ. Ը. Մ. ի Տանտանակի տօնը տեղի ունեցաւ Ուաշինկերն Հայ Սկուլի սրահին մէջ, Դեկտ. 1 ին: Յայտագիրն ունէր նուագի, երգի, կենդանի պատկերի եւ մարզանքներու բաժիններ: Պր. Քաջունի պատմականն ըրաւ Հ. Մ. Ը. Մ. ի ծագման եւ ժողովրդականացման, իսկ Պ. Քա-

չիկեան ալ իրախոսիչ ուղերձ մը ըրաւ, ուղղուած՝ հայ սկսուածներու կորովին եւ ճատայական ոգիին:

### ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

— Սկսուածից մին՞ր է մը ոչ (Պէտքն Բաւուր): — Հ. Մ. Ը. Մ. ի կեանքը, Յունաստանի, Ռումանիոյ, Պուլկարիոյ, Մարսիլիոյ եւ Շարաւ. Ամերիկայի մէջ: — Նկար ճեմագործին: — Օր. Իտա Ադամօն, Սինիսի հայ անդեանտիին (նկարով): — Խորհուրդներ գայլիկներու վարիչներուն: — Յունացիտաներ կը ճախեն: — Մարգարեան գրականութեան միջոց: Օղանատորդութիւն, եւլն, եւլն:



# ՄԱՐՄՆԱԿՐՔԱՆԵ

**ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ,** խիստ սանձամափակ է այս վերջին քաղաքին. Ֆուրպոլի մեր լուսագոյն խաղացողները մեկ-մեկ կը փառլին հայ կազմակերպութիւններէն եւ կը մտնեն օտար խումբերու մեջ:

Այս երեւոյթին պատճառներուն մեջ մտնելը, ազգային արժեքի գիտակցութեան ճեւակէտով խիստ կարեւոր է:

Յաջորդով կ'անդրադառնանք ուրեմն այս նիւթին: Մ.

## ՄԱՐԶԱԿԱՆ

Մ. Նահանգաց արլերիւմ համադաշնակցութիւնը իբր ազգ. մրցանիշեր վաւերացուցած է հետեւեալները, որոնք աշխարհի մրցանիշերէն բարձր բլլալով անոնց տեղը պիտի անցնին՝ եթէ Միջ. արլերիւմ գաշն.ը իր կարգին վաւերացնէ զանոնք. այդ մրցանիշերն են՝

Չոզ. — 4 մեթր 505 Լի Պարնա  
Սկաւառակ. — 4) մեթր 70 Էրիք Քրանց

յացուցիչներէն բազկացած մարմին մըն է, հետեւեալ բանաձեւով որոշեց ամաթէօրի մը հանգամանքը. —

Ամարտօր է այն որ կը հետեւի սքօրի կամ կը մասնակցի մրցումներու յաջողութիւնը սիրոյն, առանց իր այդ մասնակցութիւնէն ակնկալելու զբանակամ մրցանակ կամ վարձատրութիւն մը կամ ապրուստի միջոց մը:

## ԻՆՉ Է ԱՄԱԹԷՕՐ ՄԸ

Յայտնի է թէ մարզական Միութեանց կողմէ կազմակերպուած հանդէսներու մուտքին վրայ կառավարութիւնը ասուրբ չի գանձեր. բացի այն պարագայէն՝ երբ յայտագիրը վերո-Ֆեախօնիկ սքօրը իրենց ապրուստի միջոց բնագններու) մրցումներ կը պարունակէ:

Մարմն. Նախարար Մ. Հանրի Բաթէի առաջարկով «Բօմիլիէ Նասիօնալ սե Սքօր»-ը, որ մարզ. բոլոր գաշնակցութիւններուն ներկա-

30 ՄԻԼԻՄԵՆ ՖԻՍԵՅ

Ֆրանս. Երեւոյթիանական ժողովը 1930ի պիւտձէին վաւերացումին ժամանակ կառավարութեան առաջարկով 30 միլիոն ֆրանք քուէարկեց Մարմնակրթական նախարար Մ. Հանրի Բաթէի համար որ այդ գումարը պիտի յատկացնէ Ֆրանսայի ամէն կողմերը մարզապաշտերու յարգարման: Առաջին անգամն է որ կառավարութիւնը այսպէս զբոսկան օտանդակութիւն մը կը բերէ մարզ. շարժման. Մ. Հանրի Բաթէի միջամտութիւնը աւելորդ է ըսել թէ այս յաջողութեան մէջ մեծ բաժին ունեցած է:

## ՕՏԱՐ ԳՆԴԱԽԱՂ

ՆՈՅ. 1. — Փարիզի եւ Լանտանի (անաբօր) ներկայացուցչական խումբերուն միջեւ կատարուած տարեկան մրցումին մէջ երկու կողմերը հաւասար կը մնան (0—0).

## ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

«Կեզր. Եւրոպայի Բոստակ» անունով Չե-

խօսըմաքիա, Աւստրիա, Հունգարիա եւ Իտալիա համաձայնած էին տարեկան մրցումներու շարք մը հաստատել որուն պիտի մասնակցէին իւրաքանչիւր երկրի առաջին երկու խումբերը: Այս տարի այդ կերպով մրցելու իրաւունք ստացան Սլավիա եւ Սրարթա (Չեխ.) Բարթա եւ Ֆրրատ Վիէնա (Աւ.) Հունգարիա եւ Իւթթէսթ (Հունգ.) Ժիւզէնթիա եւ Միլանօ (Իտ.):



Վերջին մրցումին մնացին Ալավիա և Իւժբէսթ. առաջին մրցման մը մէջ Իւժբէսթ Պուտարէշթի մէջ յաղթեց (1ի դէմ 5ով) Ալավիայի. ընդունուած օրէնքին համաձայն երկու հակառակորդները պարտաւոր էին երկրորդ մրցում մը ևս կատարել, հակառակորդին գաշտին վրայ. այդ մրցումը տեղի ունեցաւ Բրակայի մէջ և երկու խումբերը 2-2ով հաւասար մնացին, «Իւժբէսթ» աւելի կօլ ըրած ըլլալով շահեցաւ կեդր. Եւրոպայի բաժակը. այս հունգարական յաղթանակը մեծ տպաւորութիւն ձգած է Միջագգ. ֆութպօլի աշխարհին մէջ:

**ՄԻՋԱՋԳ. ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔԸ**

Նորվեգիա	կը յաղթէ	Հոլանտայի	(4—1)
Բարակուա	»	Ուրուկուայի	(3—1)
Հունգարիա	»	Հար. Գերմանիոյ	(7—1)
Արժանթին	»	Բարակուայի	(4—1)
»	»	Ուրուկուայի	(2—0)
Անգլիա	»	Կալէսի	(6—0)
Իտալիա	»	Բորթուկալի	(6—1)
Հոլանտա	»	Պելճիքայի	(1—0)

**ԱՐԺԱՆԹԻՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ**

Ինչպէս կը յիշուի, 1928ի Միջ. Ողիմպիականին ֆութպօլի մրցանանդէսին Ֆինլալ մրցումը տեսաւ Հարաւ. Ամերիկայի հանրապետութեանց՝ Ուրուկուայի և Արժանթինի ներկայացուցչական խումբերը դէմ գիմաց: Ուրուկուայ առաջին անգամ հաւասար մնալէ վերջ, դժուարաւ յաղթեց Արժանթինի երկրորդ մրցման մը մէջ ևս այսպէսով վերանորոգեց իր 1924ի Փարիզի համբաւաւոր յաղթանակը:

Այս անգամ Արժանթին է որ կը յաղթէ Ուրուկուայի և կը շահի Հարաւ. Ամերիկայի ախոյեան տիտղոսը. մրցումը Նոյ. 17ին տեղի ունեցած է Պուէնոս-Այրէսի մէջ ահագին բազմութեան մը ներկայութեան:

Նոյն այդ մրցանանդէսին մէջ Ուրուկուայարտուած է նոյնպէս Բարակուայէ, որ իր կարգին պարտուած է Արժանթինէ:

\* \* \* Նորվեգիան ֆութպօլի Դաշնակցութիւնը իրեն նախագահ ընտրած է հին խաղացող մը՝ Բէր Աքօն, որ 34 անգամ իր ազգը ներկայացուցած է միջագգ. մրցումներու մէջ:

\* \* \* Գրած էինք թէ Անգլիա այս տարի չի պիտի մրցի Ֆրանսայի դէմ. այս վերջնոյն դիմումին վրայ Սկոտլանտ յանձն առած է յառաջիկայ Մայիսին Փարիզի մէջ մրցիլ Ֆրանսայի դէմ:

Դեկտ. 1. — Փարիզի ներկայացուցչական խումբը կը յաղթէ Գերմանիոյ Քէօլն քաղաքին խումբին 3ի դէմ 5 կօլով:

**ԳԻ ԴԷՍ 74**

Ք. Օ. Պիյանքուր խումբը, որ կը վայելէ Թրնօ գործարանին հովանաւորութիւնը և կազմուած է հոն աշխատողներէ, Փարիզի Գրդ գասակարգի (որ կը կոչուի Բրսիլիէ սիվիլիօսի) ախոյեանութեան մրցումներուն կը մասնակցի և շահած է իր առաջին եօթը մրցումներն ալ, ընելով 74 կօլ... Գի դէմ. այս ահռելի առաւելութեան մէջ իր աչքառու բաժինն ունի Հ, Մ. Հ. Մ. ի նախնին խաղացող Ս. Կարապետեան, որ կը վարէ վերոյիշեալ խումբին խմբապետութեան և կեդրոնի յառաջապահի պաշտօնները: Ս. Կարապետեան ըրած է ընդամէնը 40 կօլ և հաստատած է տեսակ մը մրցանիչ: Իր խումբին Քրէմլէնի դէմ ըրած մրցման մէջ ա՛ն... 13 կօլ ըրաւ:

(Համբարն, Պլէքբուլ խումբէն՝ որ Անգլիոյ լիկին մրցանիչին տէրն է առայժմ, միայն 22 կօլ ըրած է ցարդ:)

Ս. Կարապետեան Փարիզի լիկին կողմէ ընտրուեցաւ իբր կեդրոնի յառաջապահ մայրաքաղաքին ներկայացուցչական խումբին որ, ինչպէս գրած ենք քիչ անդին, յաղթեց Գերմանիոյ Քէօլն քաղաքին. այս վերջին մրցման մէջ Ս. Կարապետեան ըրաւ 2 կօլ: Ինք դարձեալ ընտրուած էր միեւնոյն պաշտօնին Մատրիտի դէմ մրցող Փարիզ խումբին մէջ:

**600ՐԴ ՄՐՑՈՒՄ**

Անցեալ ամիս Չեխօսլովաքիա տօնեց իր ամէնէն ժողովրդական և համբաւաւոր խաղացողին՝ ազգ. խումբի կեդր. միջնապահ Քատաի տեսակ մը յորեկեանը՝ արդարև Քատա այդ օրը իր պատկանած խումբին՝ «Սըսթա»ի հետ կը խաղար իր 600րդ մրցումը: Քատա 1913էն ի



վեր կը պատկանի միեւնոյն խումբին և ու միայն հրաշալի ֆութպոլիստ մը՝ այլ նաեւ քաջ խաղացող մըն է սառի վրայ հօֆէյի: 34 տարեկան է:

### ԲԷՆԱԼԹԻ ԵՆՈՐ ՕՐԷՆՔԻՆ ՇՈՒՐՁ

Գրեցինք այն կարեւոր փոփոխութեան շուրջ, զոր անգլ. Պօրսը մտցուցած էր բեկալիի օրէնքներուն մէջ: Ֆեքերասիոն Էնրեքիասիոնայ սը Թօրպալ ասոսիասիոնը որուն մաս կը կազմեն աշխարհի գրեթէ բոլոր պետութեանց ֆութպոլի ազգ. դաշնակցութիւնները (բացի Բրիտանացիներէն) որոշեց հետեւեալ ձեւով գործադրել այդ օրէնքը. — Բերդապահը բեկալիի հարուածը տրուած ատեն կրնայ շարժիլ զէպի ձախ կամ աջ՝ կոլի գծին վրայ, բայց երբեք՝ զէպի ետ կամ առաջ: Որոշեց նոյնպէս աւելի լուսարանութիւններ պահանջել Պօրսէն: Ինչպէս կը յիշուի, բստ անգլիացուոց բերդապահը պէտք է ոչ մէկ շարժում րնէ հարուածը տրուելէն առաջ:

### ՀԱՅ ԳՆԴԱԽԱՂ

ՆՈՅ 17. — Օրլէան քաղաքին մէջ Տօրք հայկ. խումբը կը յաղթէ տեղւոյն և շրջակայից խաղացողներէն կազմուած ներկայացուցչական խումբի մը 2ի դէմ 4 կօլով:

ՆՈՅ. 24. — Մէցի մէջ Լօրէնի ախոյեան Ս. Ա. Մէսսէն խումբը կը յաղթէ հայկ. Տօրք խումբին զէրօի դէմ 3 կօլով:

Դեկտ. 1. — Հայկ. Տօրք խումբը կը յաղթէ փարիզի մէջ Սթատ տը Էլէսթ խումբին 2 — 1ով:

Դեկտ. 8, — Տէօնքէրկի մէջ Հ. Մ. Ը. Մ.ի Ա. խումբը անուշով մրցող (ի՛նչ իրաւասութիւնով) Իթալիի Մասնաճիւղը կը պարտուի տեղւոյն խումբէն Օի դէմ 3ով:

### ՏԱՍԸ ՏԱՐԻ ՎԵՐՁ

Անցեալ ամիս Պոլսոյ Սթատիոնին մէջ տեղի ունեցած ֆութպոլի մրցման մը մէջ հայկ. «Նոր Շիշլի» խումբը յաղթած է յունական «Բերա» խումբին:

«Բերա» և «Շիշլի»... Ի՛նչ յիշատակներ կ'արթնցնեն մեր մէջ այս անուշները. Ռուբէն, Ժիլպէր, Զարմայր, Արծիւ, Պօզոսիկ, Մանուկ, Սարգիս մէկ կողմէն, Նէկրօթօնթիս, Վիթալիս, Էմանուէլիտիս եւ այլն, միւս կողմէն: Բանկայթիի գերեզմանատան մարզաբանը, յոյն և հայ ազմկարար հանդիսատեսները...

Վերոյիշեալ Նոր-Շիշլիի անդամներէն յառաջապահ Հայկ Արամ Փարիզ կը գանուի այժմ:

\* \* \* Ամսոյս 22 կիրակի օր. Հ. Մ. Ը. Մ.ի Անկիէնի Ա. եւ Բ. խումբերը խաղացին Մօնթէնի-Պօշանի Ա. եւ Բ. խումբերուն դէմ համանուն գիւղին մէջ:

Հակառակ դաշտը ջուրով լեցուն ըլլալուն Ա. խումբերը մէյմէկ նշանակէտով հաւասար մնացին, իսկ մեր Բ. խումբը մէկի դէմ չորսով պարտուեցաւ: Սոյն արդիւնքը անըսպասելի չէր, նկատի ունենալով Պօշանի Բ. խումբին խաղացողներու մեծ մասին Ա. խումբէն առնուած ըլլալը:

\* \* \* Հ. Մ. Ը. Մ.ի փարիզի Մասնաճիւղերու բաժակի մրցումները սուին հետեւեալ արդիւնքները. —

Սարսէյ, Իթալի, Գօլօմպ եւ Գարակէօգեանի Մասնաճիւղերը մնացած են յաղթական: Այս երկու վերջիններուն միջեւ մրցում մը տեղի ունեցաւ ամսոյս 25ին Գօլօմպի մէջ. Գ.րդ խումբը որոշելու համար, Գարակէօգեանի Մասնաճիւղը յաղթեց Գօլօմպի (4—0): Իսկ Ֆինայը տեղի կ'ունենայ կիրակի 5 Յունուարին Stade Pershingի մէջ:

### Թ Է Ն Ի Ս

Թէնիսի Ֆրանս. Դաշնակցութիւնը հրատարակեց Ֆրանսայի երկսեռ խաղացողներուն 1930ի դասաւորումը: Այդ դասաւորման մէջ հաճոյքով կը տեսնենք անունը Օր. Իտա Ադամօֆի, որ դասուած է Տրդ կին խաղացողներուն մէջ (Ա. դասակարգ): Հայ ախոյեանուհիին այս դասաւորումը, որ զինքը կ'անցնէ Բ.էն Ա. դասակարգը, արդիւնքն է պարզապէս իր տարած բազմաթիւ յաղթանակներուն որ չափէն աւելի պատուաբեր է իրեն համար:



# Վ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ՇՐՋՆՅԻՆ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Հ. Մ. Բ. Մ. ի փարիզի Շրջանային ընդհ. ժողովը տեղի ունեցաւ 23 Նոյ.էն 21 Գեկտ. բոլոր պատգամաւորները ներկայ եղան ժողովներուն կանոնաւոր կերպով:

Շրջանային վարչութիւնը ընտրուեցաւ հետեւեալներէ Պ. Պ. Ներսէս Օհանեան (առե- նապետ), Գրիգոր Յակոբեան, Գառլօ Պետրոսեան (փոխ-ատենապետ), Գառնիկ Յովհաննէսեան, Համբարձում Չահրէճեան (գանձապահ), Սարգիս Ճէպպարեան (հաշուեքննիչ), Հմայեակ Մատթէոսեան (քարտուղար), Խաչիկ Գատարեան, Կարօ Ուշագլեան: Ընդհ. ժողովի արդիւնքները յաջորդով կը արուի մանրամասն:

\*. Հ. Մ. Բ. Մ. ի ժուանվիի Բամաճիւղը վերակազմուած է եւ իր ֆուլթայօրի խումբը կազմած է նոր ուժերով:

Կը հրաւիրէ վէնսէնի, Նօթանի, Յօնմը- նէյի, Սէն Մանտէի եւ շրջակայի հայ երիտա- սարդները արձանագրուի սոյն Բամաճիւղին, հետեւեալ հասցէին դիմելով՝

Սուրէն Գալէնտէրեան, 2, rue Chevreul  
Saint-Maure (seine)

## ՀԱՆԴԷՍՆԵՐ

\*. Անկիէնի երեկոյթ - պարահանդէսը տեղի ունեցաւ Նոյ. 31 շաբաթ գիշեր: Գովելի էին տեղւոյն վարչութեան անդամներուն եւ հանդէսի ջանձնախումբի ջանքերը, որոնք յա- չողած էին 1000ի մօտ ժողովուրդ մը հետա- քրքրել Հ. Մ. Բ. Մ.ով եւ հաւաքել սրահին մէջ: Արդիւնքը բաւական կոկիկ գումար մը եղաւ, որը պիտի յատկացուի Բամաճիւղի սկաուտ- ներու, մարզիկներու եւ ֆուլթայօրիսաներու պէտքերուն: Տեղւոյն ֆրանսական թերթերը մեծ գովեստով կը խօսին սոյն հանդէսին մա- սին եւ կը հրաւիրեն ֆրանս. Միութիւնները օգտուիլ Հ. Մ. Բ. Մ. ի անձերի կազմակերպու- թեան եւ կարգապահութեան օրինակէն:

\*. Ամսոյս 14ին տեղի ունեցաւ Պուա Գօլօմպի Բամաճիւղի երեկոյթը. հո՞ծ բազմու- թիւն մը ներկայ էր:

Հանդէսը սկսաւ սկաուտներու տողանց-

քով, որմէ վերջ սկաուտները ներկայացու- շատ սիրուն կատակերգութիւն մը՝ «Նոր ծանօ», շատ յաջող կերպով:

Տեղի ունեցան երգեր, արտասանուե- լներ, սկաուտներու եւ յայտնի դերասաններ Շահան Սարեանի եւ Գմբէթեանի կողմէ, ի պէս նաեւ յայտնի դերասան երգչուհի Տի- Սուրաբեան. որ գեղեցիկ կերպով երգեց զովդակաւ երգեր:

Տեղի ունեցաւ Տրամաթիքի դերասան- րու կողմէ «Վերի Յաշարանի սպասաւոր քրքչալի» կատակերգութիւնը՝ որուն մէջ մ առին Բարսուտեան, Տիկ. Տէրուան, եւ այլ բոլոր դերասաններն ալ իրենց սիրայօժ- մասնակցութիւնը բերած էին առանց ու- նիւթակաւ ակնկալութեան: Բոլորին ալ խոր շնորհակալութիւն:

Ընդհ. հասոյթը գոհացուցիչ է.

\*. 28 Գեկտ.ին տեղի ունեցաւ Ալֆորվիլի Ման- ճիւղին բացման երեկոյթը, մարապետութեան սրահին մ Սրօհր լեյոնն էր խումբ բազմութեամբ: Կը նախագահէր Է- Վարչութեան փոխ-ատենապետ Պ. Գ. Պետրոսեան:


Հանդէսը բացուեցաւ սկաուտական բալլերով, որ կ գեյին սկաուտներն ու գայլիկները: Ետո սգետիչ անց հանդէսը, եղան ներկայացում, կատակախօսի եւ արտասան- թիւններ, բոլորն ալ սկաուտներու եւ գայլիկներու կողմէ:

Գովելի է տեղին ՎաչուՍիւնը եւ մասնաւորապէս սկաուտ-խմբապետ Պ. Ժ. Միննանեան:

## Հ. Մ. Բ. Մ. ի ՏՕՆԸ ՊՈՒՔՐԷՇԻ ՄԷՋ

Մե՞ծ խանդավառութեամբ Հ. Մ. Բ. Մ. տօնը տեղի ունեցաւ Պուլքէշի մէջ, 17 Նոյնե- րին: Առտուն եկեղեցիին մէջ հոգեհանգստե- ան պաշտօն կատարուեցաւ անհետացա- մարզիկներու յիշատակին: Իսկ կէսօրէն յետո Պուլքէշի Բամաճիւղին ակումբին մէջ թէյ- սեղանի մը շուրջ հաւաքուեցան Հ. Մ. Բ. Մ. անդամները, երեկոյին հանդէսը տեղի ունե- ցաւ խումբ բազմութեան մը ներկայութեան:

Սկաուտներու կողմէ կատարուած մար- զանքներէն եւ գեղարուեստական բաժինէն յետոյ ներկայացուեցաւ Սօքոլներու ֆիլմը, որ հանդէսին ամէնէն հետաքրքրական մասն էր: Ֆիլմը Միութեան տրամադրած էր ջեխօսովոր- դեսպանատունը, որուն կողմէ հանդէսին ներ- կայ էր դեսպանատան բժիշկը Պ. Գոտիսար:





# Վ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ՇՐՋԱՆԱԿ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Հ. Մ. Բ. Մ. ի փարիզի Շրջանային Ընդհ. Ժողովը տեղի ունեցաւ 23 Նոյ.էն 21 Գեկտ. բոլոր պատգամաւորները ներկայ եղան ժողովներուն կանոնաւոր կերպով:

Շրջանային վարչութիւնը ընտրուեցաւ հետեւեալներէ Պ. Պ. Ներսէս Օհանեան (տեղնապետ), Գրիգոր Յակոբեան, Գառլո Պետրոսեան (փոխ-տեղնապետ), Գառնիկ Յովհաննէսեան, Համբարձում Զահրէճեան (գանձապահ), Սարգիս Ճէպպարեան (հաշուեքննիչ), Հմայեակ Մատթէոսեան (քարտուպար), Խաչիկ Գասպարեան, Կարօ Ուշագլեան: Ընդհ. Ժողովի արդիւնքները յաջորդով կը տրուի մանրամասն:

\* \* Հ. Մ. Բ. Մ. ի Ժուանվիլի Մամաճիւղը վերակազմուած է եւ իր ֆուլթայօլի խումբը կազմած է նոր ուժերով:

Կը հրաւիրէ վէնսէնի, Նոթանի, Զոնմընէյի, Սէն Մանտէի եւ շրջակայի հայ երիտասարդները արձանագրուի սոյն Մամաճիւղին, հետեւեալ հասցէին դիմելով՝

Սուրէն Գալէնտէրեան, 2, rue Chevreul Saint-Maure (seine)

## ՀԱՆԴԵՍՆԵՐ

\* \* Անկիէնի երեկոյթ - պարսիանդէսը տեղի ունեցաւ Նոյ. 31 շաբաթ գիշեր: Գովելի էին տեղւոյն վարչութեան անդամներուն եւ հանդէսի ջանձնատուքի ջանքերը, որոնք յաջողած էին 1000ի մօտ ժողովուրդ մը հետաքրքրել Հ. Մ. Բ. Մ.ով եւ հաւաքել սրահին մէջ: Արդիւնքը բաւական կոկիկ գումար մը եղաւ, որը պիտի յատկացուի Մամաճիւղի սկաուտներու, մարզիկներու եւ ֆուլթայօլիստներու պէտքերուն: Տեղւոյն ֆրանսական թերթերը մեծ գովեստով կը խօսին սոյն հանդէսին մասին եւ կը հրաւիրեն ֆրանս. ֆուլթայօլիստները օգտուիլ Հ. Մ. Բ. Մ. ի անտերի կազմակերպութեան եւ կարգապահութեան օրինակէն:

\* \* Ամսոյս 14ին տեղի ունեցաւ Պուա Գօլովայի Մամաճիւղի երեկոյթը. հոժ բազմութիւն մը ներկայ էր:

Հանդէսը սկսաւ սկաուտներու տողանց-

քով, որմէ վերջ սկաուտները ներկայացուցաւ սիրուն կատակերգութիւն մը՝ «Նոր ծանօ», շատ յաջող կերպով:

Տեղի ունեցան երգեր, արտասանութիւններ, սկաուտներու եւ յայտնի դերասաններ, շահան Սարեանի եւ Գմբէթեանի կողմէ, ի պէս նաեւ յայտնի դերասան երգչուհի Տիլ Սուրաբեան. որ գեղեցիկ կերպով երգեց զովդական երգեր:

Տեղի ունեցաւ Տրամաթիքի դերասաններու կողմէ «Կերի ճաշարանի սպասաւոր» քրքրալիլ կատակերգութիւնը՝ որուն մէջ մտնաւ Մարքուտեան, Տիկ. Տէրուան, եւ այլ բոլոր դերասաններն ալ իրենց սիրայօժ մասնակցութիւնը բերած էին առանց ոչ նիւթական ակնկալութեան: Բոլորին ալ խոր շնորհակալութիւն:

Ընդհ. հասոյթը գոհացուցիչ է.

\* \* \* 28 Գեկտ.ին տեղի ունեցաւ Ալիբալիկի Մամաճիւղին բացման երեկոյթը, Սաղապետութեան սրահին մէջ: Սրահը լեցուն էր խումբ բազմութեամբ: Կը նախազանգէր Հարչութեան փոխ-տեղնապետ Պ. Գ. Պետրոսեան:

Հանդէսը բացուեցաւ սկաուտական բայլերգով, որ կը գեցնէ սկաուտներն ու գայլիկները: Ետոք ոգեւորիչ անցանակներ, եղան ներկայացում, կատակախօսք եւ արտասանութիւններ, բոլորն ալ սկաուտներու եւ գայլիկներու կողմէ:

Գոյլիկ է տեղին վարչութիւնը եւ մամաճիւղի սկաուտակարգաւոր Պ. Ժ. Միննանեան:

## Հ. Մ. Բ. Մ. ի ՏՕՆԸ ՊՈՒՔՐԷՇԻ ՄԷՋ

Մեծ խանդավառութեամբ Հ. Մ. Բ. Մ. անոնք տեղի ունեցաւ Պուքրէշի մէջ, 17 Նոյեմբերին: Առտուն եկեղեցիին մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ անհետացած մարզիկներու յիշատակին: Իսկ կէսօրէն յետոք Պուքրէշի Մամաճիւղին ակումբին մէջ թէյստեղանի մը շուրջ հաւաքուեցան Հ. Մ. Բ. Մ. անդամները, երեկոյին հանդէսը տեղի ունեցաւ խումբ բազմութեան մը ներկայութեան:

Սկաուտներու կողմէ կատարուած մարզանքներէն եւ գեղարուեստական բաժինէն յետոյ ներկայացուեցաւ Սորոյներու ֆիլմը, որ հանդէսին ամէնէն հետաքրքրական մասն էր: Ֆիլմը Միւլթեան տրամադրած էր ջեխօսութեան դեսպանատունը, որուն կողմէ հանդէսին ներկայ էր գեսպանատան բժիշկը Պ. Գոտինար:

